

Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Աւետարէր Հայաստանեայց

LA COLOMBE DU MASSIS

MESSAGER DE L'ARMÉNIE

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՒ ԱԶԳԱՍԻՐ ՍԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ

ՊԱՐՈՆ ԵԴՈՒԱՐԴԱՅ ՌԱՓԱՅԵԼԻ ՂԱՐԱՄԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Նոյեմբեր 1856. — Թիւ ԺԱ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՆՆՑԱՂՕԳՈՒՑ ԲԱՆՔ.

Ինդիւր իրաւաստիւրեան պապին Հոովմայ .  
Բանալի Բնական գիտութեանց. (Շարայարութիւն).  
Առակ . — Աղուս եւ Ազուս . (Լաֆոնթէն):

ՏԵՍԱՐԱՆՔ ԵՒՐՈՊԱՅ.

Հոողոս Կղզի եւ Քաղաք .  
Թիւ բնակչաց Գաղղոյ :

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ.

Սպեր եւ Բագրատունիք . (Շարայարութիւն եւ վերջ) :  
Եպիսկոպոսապետ ամենայն Հայոց Տէր Ներսէս սրբա-  
զան Կարողիկոս .  
Հայկազունք Իննետասներորդի դարուս . Հայ . եւ  
Գաղղ . (Շարայարութիւն եւ վերջ) :

ՓԱՐԻՋԵԱՆ ԱՄՍԱԳԻՐ.

Ինդիւր Նեոշաթէլի :

PUBLIÉE SOUS LES AUSPICES

DE M. ÉDOUARD RAPHAEL GHARAMIAN.

DEUXIÈME ANNÉE.

Novembre 1856. — N° 11.

SOMMAIRE.

CONNAISSANCES UTILES.

Question de la juridiction du pape.  
La clef des sciences naturelles. (Suite.)  
Fable, — le Renard et le Corbeau. (Lafontaine.)

TABLEAUX DE L'EUROPE.

L'île et la ville de Rhodes.  
Dénombrement de la population de France.

MUSÉE ARMÉNIEN.

Spèr et les Bagratides. (Suite et fin.)  
S. S. Nersès, patriarche suprême de l'Arménie.

La société arménienne au XIX<sup>e</sup> siècle. Arm.-Franç.  
(Suite et fin.)

CHRONIQUE DE PARIS.

Question de Neuschâtel.

Փ Ա Ր Ի Չ

Ի ԳՐԱՆՈՑԻ ՊԱՐՈՆ Տ. ԱՐԱՄԵԱՆ

Ի Փողոցն Սեն-Սիւլփիս, Թ. 38.



## ԱՒԵՏԱՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

### ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԲԱՆՔ

ԽՆԳԻՐ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՊԱՊԻՆ ՀՈՌՎԱՄԱՑ :

Մեր վերադարձին պատմութեանը մեջ հարկադրեր էինք քանի մը ծանր խնդիրներու վրայէն քերել կերպով մը անցնելու . եւ քեպտ խոստացանք, — ու հաստատուն դիտաւորութիւն ունինք կատարելու խոստմունքնիս, — որ եր Աստուածարանութեան մը մեջ այն խնդիրները մի առ մի բացատրել, բայց Պօլսոյ ազգայնոց մեջէն քանի մը պատուաւոր անձինք գրեթէ բոնադատեցին զմեզ որ ամսագրոյս մեջ ալ յստակ խօսքերով մտքերնիս քիչ մը պարզենք Հոռովմայ Պապին իրաւասութեանը վրայ : Բռնադատեցին կըսեմ, վասն զի ամսագիրնիս այսպիսի խնդիրներու ասպարէզ ընելը մեր յօժարութենէն դուրս էր . եւ սակայն հարկ է (ըսին) որչափ կարելի է շուտով պատասխանել այն հարցմանց որ վերոյիշեալ պատմութեան մեկ քանի խօսքերէն մեր

ազգին մեջ սկսան պտըտիլ . եւ զխաւորապէս այն խօսքն որ ըսեր ենք նոյն պատմութեան 41 երեսը, « Երրորդ, անիրաւ պահանջմունք է « Հոռովմայ պապերուն ըրածը՝ որով կուզեն որ « ամենայն եկեղեցիք քրիստոնէից (ընդ որս եւ « Հայք) զիրենք ճանչնան մի միայն երեսելի գլուխ « ընդհանրական եկեղեցոյն Քրիստոսի . եւ այն « ոչ միայն դասական կարգաւ մը իբրեւ *տաշին* « *ի մէջ հաւասարից*, այսինքն կարողիկոսաց եւ « պատրիարքաց, այլ եւ իբրեւ գլուխ նոցա եւ « հրամանատար, եւս եւ ձեռնադրող, եւ կամ « զեր իրենց արուած իշխանութեանը մեջ հաս- « տատող : Եւ որովհետեւ Հայաստանեայց եկե- « ղեցին ոչ երբէք ճանցցեր է պապերուն այսպիսի « իշխանութիւն ունենալը իր վրայ, այսուհետեւ « ալ պարտական չէ ճանչնալու : »

Այս խնդիրը լու հասկընալու համար գիտնալու է որ պապականաց կամ հռովմեականաց խօսքին նայելով, պապին իրաւասութիւնը կամ իշխանութիւնը բացարձակ եւ անսահման տիրապետութիւն է ի վերայ ամենայն եկեղեցեաց քրիստոնէից, եւ սրապէս է մի միայն զտախ տիեզերական եկեղեցոյ եւ միայն որդ Քրիստոսի կամ զլիսալիսան, զերագոյն բանանալապէս, Յագաւոր Յագաւորաց եւ հայր հայրաց (rex regum et imperator imperatorum) եւ զբժէ Աստուած (quasi Deus) անախ, ըստ ոմանց եւ անմեղանչական : Արդ այս վարդապետութեան ինչ աստիճանի աններք ըլլալը նոյն իսկ հռովմեական աստուածաբանից մեջ գիտնագոյն եւ քաջագոյն ճանչցուածները բազմանաոր գրուածքներով ցուցուցած են . մենք այ պիտի ցուցընենք ի զեպ ժամանակի : Հոս մեր առաջուց ըսածը մեկնելու ջափ հարկաւոր եղածը միայն զնենք :

Հոովմայ պապերուն տիեզերական տիրապետութիւնը պաշտպանել ուզողները կըջանան նախ սուրբ աւետարանին խօսքերը քաշքըշել, եւ իրենց կարծիքը անով հաստատել . մենք այ ամեն բանէ առաջ այս տեսենք քէ արդեօք Փրկիչն մեր այնպիսի բացարձակ տիրապետութիւն մը հաստատեց իր առաքելոց մեջ քէ ոչ . կամ քէ կամեցան արդեօք իրեն այնպիսի փոխանորդ մը որոշել երկրիս վրայ որ աշխարհիս ամենայն եկեղեցիներուն վրայ իշխէ՝ անուանելով ինքզինքը *հրանանանան հոր յընդհանուր եկեղեցիս Քրիստոսի* :

Կըսէ մեզի սուրբ Աւետարանը քէ որ մը ասոր նման խնդիր մը սրատանեցաւ առաքելոց մեջ, եւ կընարցընէին իրարու քէ արդեօք մեջերեխ ամենէն մեծը ո՞վ պիտի համարուի . Տերն մեր այս պատասխանս տուաւ անոնց . « Քաղաւորք « ազգաց տիրեն նոցա, եւ մեծամեծքն իշխեն » նոցա : Ոչ այնպէս իցէ եւ ի ձերում միջի . այլ « որ կամիցի ի ձեռն ձեռքիս » եղիցի ամենեցուն « կրտսեր եւ ամենեցուն պաշտօնեայ . որպէս « Արդի մարդոյ ոչ եկն պաշտօն անուի, այլ « պաշտել, եւ տայ զանձն իւր փրկանս փոխա- « նակ բազմաց » :

Քրիստոսի տեսան մերոյ այս խօսքէն ո՞չ ապաքէն յայտնապէս կրտսերուի որ տիրապետութեան հոգին բոլորովին նեղու բոնել ուզեր է առաքե-

լոց՝ ուստի եւ բոլոր եկեղեցոյ մեջէն : Նոյն բանը կընաստատէ նաեւ Պետրոս առաքեալ՝ երբ որ առաջնորդաց կապապրէ որ չըլլայ քէ իրենց ժողովրդոցը վրայ տիրել ուզեն . « Մի իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին : » Այսպէս հասկըցեր էին միշտ ամենայն Հարք եւ վարդապետք եւ պատրիարքունք եկեղեցոյ իրենց եւ իրարու իշխանութիւնը . եւ երէ յանկարծ մտքերնէն անգամ անցներ քէ « Ո՞վ ի նոցանէ համարիցի մեծ, » Քրիստոսի պատասխանովը անշուշտ սրտերին լկընանգէր ու մտքերին կըխտնարներ կընանդարտեր :

Եւ սակայն շատ մը պապական աստուածաբանք Հոովմայ պապերուն գերագոյն եւ բացարձակ իրաւասութիւն ունենալուն հիմն է կրտսեն՝ սրբոյն Պետրոսի զլիսալիս առաքեալ կամ զտախ առաքելոց կամ առաքելապետ ըլլալը . ուստի կընտեսընեն քէ ինչ իշխանութիւն որ ունէր սուրբն Պետրոս միւս առաքելոց վրայ, եոյնը հարկաւ պիտի ունենան նաեւ իր յաջորդները՝ այսինքն Հոովմայ պապերը՝ միւս առաքելոց յաջորդներուն վրայ :

Իսկ արդ սրբոյն Պետրոսի միւս առաքելոց վրայ բացարձակ իշխանութիւն ունենալը անհիմն է ամենեւին, եւ հակառակ սրբոյ Աւետարանին, ապա ուրեմն անհիմն ու անիրաւ է նաեւ պապերուն այնպիսի իշխանութիւն ունինք ըսելը ի վերայ այլոց առաքելական եկեղեցեաց : — Այս խնդիրը ի հարկէ աստուածաբանական ըլլալովը՝ աստուածաբանութեան մեջ կըլուծուի տեղիտեղը . բայց հոս այ որ մեջ բերելու ստիպուեցանք՝ քանի մը խօսքով մտքերնիս բացատրենք :

Աւետարանին խօսքերէն այս միայն կերեւնայ քէ սուրբն Պետրոս առաջնութիւն մը ունէր առաքելոց մեջ, եւ այս առաջնութիւնն է որ երբեմն զլիսալիսութիւն կամ նախապատուութիւն այ ըսուեր է : Բայց ո՞ր տեսումով է որ նոյն առաքեալը տիրապետութիւն կամ նաեւ պարզ իշխանութիւն մը ունեցած կամ բանեցուցած ըլլայ իր առաքելակցացը վրայ : Եւ ինչպէս կընար ունենալ կամ բանեցընել այնպիսի իշխանութիւն մը որ Փրկիչն մեր ծանր խօսքերով ու զրեքէ սաստելով մը հասկըցուցեր էր ամենուն քէ իր առաքելոցը մեջ պիտի չգտնուի, ինչպէս որ վերը լիջեցինք : Ինքզինքը միայն ճանչցուց անոնց տէր եւ վարդապետ, իսկ ուրիշներուն արգիլեց որ վարդապետ եւ հայր պատուանուններն անգամ չտան մեկմեկու՝ քէ որ այն պատուանունները տիրապետութեան իրաւունք մը տալու պէս կրեւնան :

<sup>1</sup> Մատթ. Ի, 25—28; Մարկ. Ժ, 45—46; Դուկ. ԻԲ, 24—26 :

Իսկ քե նոյն սուրբ Աստուարանին մեկ քանի նշանական խօսքերը ինչպէս հասկընալու է. զոր օրինակ ասիկայ . « Իու ես վե՛ժ, եւ ի վերայ այդր վիճի շինեցից զեկեղեցի իմ . » եւ միւսը, « եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեղբարս քո . » եւ դարձեալ, « Արածեան զոջխարս իմ » եւ այլն, շատ երկայն կրչար հոս մի առ մի բացատրելը : Բաւական համարինք այս միայն յիշեցրնել քե այն խօսքերէն առաքեալք ոչ երբէք հասկըցեր էին քե Պետրոս առաքեալ իրենց վրայ *բացարձակ իշխանութիւն* ունի իբրեւ *մի միայն* հիմն եկեղեցոյ, *մի միայն* հովուապետ, *մի միայն* ռատուցիչ ուղիղ հաւատոյ, եւ այլն . ինչպէս որ յայտնի է նոյն իսկ սուրբ Աստուարանէն, Գործոց առաքելոց պատմութենէն եւ Առաքելական քղբերէն : Յայտնի է ուրեմն որ ինչպէս շատ անգամ սուրբն Պետրոս միւս առաքելակցացը կողմանէ կրխօսեր առ Փրկիչն, ինքն ալ այդ նախազատութիւնները Պետրոսի տալովը՝ միւս առաքելոց ալ տուած կրհամարուէր ընդհանրապէս :

Սյօպէս հասկըցած են այն խօսքերը ետեւ հախնի սուրբ Հարք եւ վարդապետք եկեղեցոյ . անոր համար է որ սովորութիւն ըրած են անգաղարբան, *առաքելական եկեղեցիք* այսպէս կը վարդապետեն : եւ որչափ հին դարերուն երբանք, այնչափ աւելի այս ոճով խօսող վարդապետներ կը գտնենք, ինչպէս Տերտուղիանոս, Երանոս, Ռոդոլինէս, եւ մանաւանդ սուրբն Կիպրիանոս՝ որ ուրիշ շատ խօսքերէն զատ կրսէ քե « եւ այլք յառաքելոց զնոյն պատիւ եւ զնոյն իշխանութիւն ունէին զոր ինչ եւ Պետրոս : » Երաւ է որ շատ անգամ մեծարանօք եւ պատուով կրխօսի այն սուրբը *Հոովմայ Լոյխկոպոսին*՝ այսինքն պապին վրայ . բայց տեղը եկած ժամանակը կը մեղադրէ զինքն ու կը յանդիմանէ ալ, եւ անոր զբած նամակներուն վերնագիրը միշտ իբրեւ առ հաւատար կը զնէ . « Կիպրիանոս՝ Կոռնելեայ եղբոր խնդալ : » — Ուրիշ նամակի մը մէջ ալ նոյն Կոռնելիոս պապին *Լոյխկոպոսիկց* պատուանունը միայն կուտայ : նոյն կերպով համարձակ կը խօսին Հոովմայ պապերուն վրայ ետեւ երանելին Փիրմիլիանոս եպիսկոպոս Կեսարիոյ Կապադովկացոց (զոր պատուով կը յիշէ եւ Թորենացին), Լակտանտիոս, Գիոնեսիոս պատրիարք Սղեբտանդրիոյ, եւ նոյն իսկ Հոովմայ առաջին հայրապետները՝ որ ոչ երբէք ուրիշ պատրիարքաց եւ եպիսկոպոսաց վրայ տիրապետելու ջանք կամ իրաւունք մը կը ցուցընէին :

*Կանոնք առաքելոց* անունով հաւաքում մը կայ ուր սուրբ չափ եկեղեցական կանոնաց՝ որ առհասարակ ընդունելի են արեւելեան եւ արեւմտեան եկեղեցեաց, եւ անտարակոյս եկեղեցոյառաջին երեք դարուցը մէջ հաստատուած են : Սրդ այն կանոնաց մէկն ալ գայս կը պատուիրէ որ « Եւրաքանջիւր ազգի եպիսկոպոսները իրենց մէջ առաջինն որ ո՛վ է՝ զանիկայ ճանջեան *զմբ*, եւ ամենեւին գլխաւոր զործոյ կամ դժուարին խնդրոյ մը ձեռք չզարնեն՝ առանց անոր խորհուրդ հարցընելու . անիկայ ալ բան մը պիտի չընէ, կըսէ, առանց ամենուն ալ հաւանութիւնն առնելու : »

Մեծին Կոստանդիանոսի դարձէն ու քրիստոնէական հաւատոյ պայծառանալէն ետքը բնական կերպով մը Հոովմայ եկեղեցին ալ աւելի պայծառութիւն մը առաւ, բայց աւելի *Իշխանութիւն* մը ջունեցաւ ուրիշ եկեղեցեաց վրայ . եւ այս բանս յայտնի է նոյն իսկ Կոստանդիանոսի առ եւսերիոս եւ առ այս գրած քղբերէն եւ ըրած եկեղեցական ժողովներէն, որոց մեծն եղաւ Նիկիոյ սուրբ ժողովը : Սյն ժողովոյն զուժարուիլն եղաւ ի հարկէ խորհրդով եւ ի խնդրոյ եկեղեցականաց եւ սրբոյն Սեղբեստրոսի, բայց ոչ երէ նախազանութեամբ այն հայրապետին, այլ Ովսիոսի եպիսկոպոսին Կորդուրայ Սպանիոյ : Իսկ Սեղբեստրոսի զեպանները կամ փոխանորդները Բիտոն եւ Բեկկեսոի՝ նախազան չէին (ինչպէս որ կըսեն սովորաբար պապականք), ուստի եւ Ովսիոսէն ետքը ստորագրեցին իրենց անունները :

Նիկիոյ սուրբ ժողովն ետեւ Սարգիկեայ ժողովն ալ որ եղաւ 547ին, նախազանը նոյն Ովսիոս եպիսկոպոսն էր, Հոովմայ պապին փոխանորդներն ալ ուրիշ երկու քանանայ : Սյն ժողովոյն մէջ Ովսիոսի առաջարկութեամբը որոշուեցաւ որ այնուհետեւ երբ որ եպիսկոպոսի մը վրայ ամբաստանաւրին ըլլայ ուրիշ եպիսկոպոսներէ, դատաստանը՝ *ի պատիւ յիշատակի առաքելոցն Պետրոսի*՝ Հոովմայ եպիսկոպոսին ձգուի : Որով կիմացուի քե լոկ *պատիւ* մըն էր պապին տրուածը, եւ ոչ քե պապէն պանանջուած *Իբատնք* : Ստոր մեկ ապացոյցն ալ այս է որ այն ստոնները պապին սովորական անուանակոչութիւններն էին *Լոյխկոպոս Հոովմայ, Լոյխկոպոս Եկեղեցոյն Հոովմայեցոց, պատրիարք կամ կանոնդիկոս ազգին Հոովմայեցոց*, ինչպէս մեր Ազարանգեղոսն ալ *կանոնդիկոս* կըսէ սրբոյն Սեղբեստրոսի համար :

Վրան հարիւր տարիի չափ անցաւ, Քաղկեդոնի

ժողովոյն մէջ Կոստանդնուպօսոյ պատրիարքա-  
զան արո՞ւ ըլլալուն խնդիրն ելաւ. որոշուեցաւ  
որ հնոյն Հոովմայ արո՞ւոյն *հախապատուածիւն*  
տրուի (Սարգիկեայ ժողովոյն որոշմանը համե-  
մատ). իսկ Աղեքսանդրիոյ արո՞ւը՝ որ երկրորդ  
էր՝ այնուհետեւ երրորդ ըլլայ, իսկ երկրորդ  
համարուի նորոյն Հոովմայ՝ այսինքն Կոստանդ-  
նուպօսոյ արո՞ւը. որով եւ Անտիօքայ արո՞ւը  
որ առաջ երրորդ էր՝ չորրորդ կըլլար : Բայց  
այն ժամանակէն սկսաւ Հոովմայ պապերուն մէջ  
տիրապետական հոգի մը երեւնալ ու աճիլ՝ մին-  
չեւ Փոտայ ժամանակները, որ անոնց հաւասար  
կամ անոնցմէ աչ աւելի պատիւ ուզեց ունենալ.  
ուստի եւ կոիւր շատ մեծցաւ, Յունաց ու Լատի-  
նացոց եկեղեցիներուն մէջ անհաշտելի բշխա-  
մութիւն մը մտաւ, եւ այն բշխմութիւնը քանի  
զնաց հաստատուեցաւ. այնպէս որ քեպետ քանի  
մը ժողովներ աչ ըրին ետքերը երկու կողմէն որ  
Յոյնք եւ Հոովմայեցիք մէկմէկու հետ հաշտուին,  
մինչեւ Փյորենտիոյ ժողովոյն ատենը, բայց օգուտ  
մը չտեսան. վասն զի կոռույն բուն արմատը  
խելու միտք չունէին՝ որ էր իրարու վրայ տի-  
րապետելու հոգին : Յայտնի բան է որ երէ այն  
հոգին մէկզի դրուէր, շատ դիւրին պիտի ըլլար  
աստուածաբանական խնդիրներուն եւ ուրիշ եկե-  
ղեցական իրաւանց ու արարողութեանց պեսպի-  
սութեանը վրայ համաձայնիլը եւ միարան մնալը :  
Բայց ինչո՞ւ այնչափ աչ հեռու երբանք. երէ այսօր  
աչ Հոովմայ պապերը իրենց միանեման տիրա-  
պետութեան ջանքէն ետ կենալ ուզէին, ոչ ապա-  
քէն շատ հաւանական է որ Քրիստոսի եկեղեցին  
ձեւացընող զանազան ազգք եւ ազինք եւ ժողո-  
վորքք նաեւ արտաքուստ *մի հոս* միայն ըլլային,  
եւ իրարու հետ քրիստոնեական եղբայրսիրու-  
բեամբ վարուելով՝ մտքերնէն անզամ ջանցընէին  
այնուհետեւ քէ ո՞վ որ իրենց պատրիարքին կամ  
եպիսկոպոսին ջննազանդիր՝ քրիստոնէութենէ  
դուրս է, չարափառ է, հերետիկոս է, դժո-  
խոց որդի է : — Եւ անա ասով աչ կիմացուի քէ  
ուրեմն Քրիստոսի սուրբ եկեղեցին պառակտողը,  
քրիստոնեայ ազգերը կտոր կտոր ընողը, աշ-  
խարհիս երեսը գայրակղութեամբ լեցընողը,  
քրիստոնէութիւնը անհատաւից, կռապաշտից,  
հրէից եւ մանմետականաց առջեւ ծաղր ընել  
տուողը՝ ոչ երէ սուրբ հաւատոյ խորհուրդներուն  
ու եկեղեցական արարողութեանց վրայ ըստ տե-  
ղեաց տեղեաց եւ ըստ ազգաց ազգաց զանազան  
կարծիքներ գտնուիլն է, — հապա այս անհաշտ

բշխմութեամբ անոնց մէկզմէկ դժոխքի դատա-  
պարտելն է. կամ որ նոյն է՝ այն ամենայն չար-  
բեաց պատճառ՝ հոովմեականաց պնդելն է քէ  
պետք է որ ամենայն ազգք եւ եկեղեցիք քրիս-  
տոնէից զպապը ճանչնան իրենց *մի միայն զուի*,  
եւ անոր հրամանացը հնազանդին ամէն բանի  
մէջ :

Հոովմեական աստուածաբանից մէջ այնպիսի  
անձինք՝ եղած են որ այս իրենց անտեղի եւ վնա-  
սակար կարծիքը մինչեւ ծայրը հասուցեր են :  
Անոնց մէջ անուանի է Մարիանա անունով սպա-  
նիացի յիսուսեան աստուածաբանը, որ իր գրք-  
քերէն մէկուն մէջ կըհաստատէ քէ պապին հրա-  
մաններուն դէմ կեցող քազաւորները մեղքընելը՝  
մեղք չէ, արդարութիւն է : Կրսեն, եւ շատ հաւա-  
նական է, քէ այն գրքին խօսքերէն յորդորուեցաւ  
Ռավայեաք անունով արքայասպանը Գաղղիոյ  
Հներիկոս Գ քազաւորը սպաննելու՝ իբրեւ աս-  
տուածանաճոյ գործ մը ընելու մտքով : Գաղղիոյ  
խորհրդարանը Մարիանային այն զիրքը այրել  
տուաւ հրապարակաւ Փարիզու մայր եկեղեցոյն  
դրան առջեւը 1610ին, եւ սակայն ուրիշ շատ  
յիսուսեան աստուածաբաններ աչ նոյն վարդա-  
պետութիւնն ըրին, ինչպէս Պէքան, Սանրարեյի,  
Եղեմոն Յովհաննէս, Սուարեզ եւ այլն : Անոնց  
եւ նմանեաց կարծիքն այս է քէ պապն է մի  
միայն, միանեման եւ տիեզերական քազաւոր.  
Իսկ կայսերք եւ քազաւորք անոր *փոխանորդներն*  
են որ ուզած ատենը կրնայ փոփոխել, եւ երէ  
իրեն դէմ բան մը ընեն՝ մեղքընել տալ, անոնց  
տեղը տեղապահ մը յուղարկել, տերութիւնը կա-  
ռավարել, հաւնած մարդը քազաւորեցընել, եւ  
երէ անիկայ աչ ապստամբի՝ սպաննել տալ :  
Իրացընէ աչ այս սկզբունքը ի գործ դրուեցաւ  
Գաղղիոյ մէջ քիչ մը ժամանակ՝ 1576ին ատեն-  
ները. վասն զի Կիզ դուքսը՝ Լոռէնի կարդինային  
հետ Գաշնակցութիւն մը հաստատեց ի մէջ հոով-  
մեականաց՝ Հներիկոս Գ քազաւորը արո՞ւն ձգե-  
լու համար, որովհետեւ այն խաղաղասեր քա-  
զաւորը Կալվինականաց դէմ հալածանք հանել  
չէր ուզեր : Կիզ դքսին խնչըր միտքը այն էր որ  
ինքը քազաւորէ. ուստի միարանեցաւ Սպանիոյ  
Փիլիպպոս Բ քազաւորին ու Գրիգոր ԺԳ պապին  
հետ, եւ Գաղղիոյ քանի մը քաղաքներուն տիրա-  
պետեց : Չղիմացաւ Հներիկոս այն անիրաւ  
ապստամբութեան, ու զդուքսը սպաննել տուաւ,  
ասով աւելի աչ զրգոնց իրեն դէմ հոովմեակա-  
նաց մոլի եռանդը. պապը զինքը բանադրեց,

Սորպոնի աստուածաբանները հրատարակեցին որ Հենրիկոս արոռէն ձգուած է, եւ տեղապահ քաղաւորական արոռոյն անուանեցաւ Պուրպոնեան կարդինայ մը : Հենրիկոսի ճարը հատած՝ զնաց Նաւարրայի քաղաւորին հետ միացաւ, անկեց գորք առաւ՝ Փարիզու վրայ քայեց. եւ այն ինչ քաղաքը մտնելու վրայ էր, Յակոբ Կղեմէս (Ժաք Քլեման) անունով դոմինիկեան կրօնաւորին մէկը զարկաւ սպաննեց զինքը : Եւ ահա այն մոլեռանդ աւագակին համար Մարիանա յիսուսեանը ջամբըցաւ ըսելու թէ *Գաղղիոյ յաւերժական սպարձանքն է* (æternum Galliæ decus) :

Այս պատմութիւնը հագարէն մէկն է որ հոս քանի մը խօսքով յիշեցինք, որպէս զի հասկըցուի թէ բուն շերմեռանդ հոովմեական աստուածաբանից միտքը եւ կարծիքը մինչեւ ո՞ր կերպայ : Կընարցընենք ուրեմն անաչառ աստուածաբանից ու եկեղեցական պատմութեան փոքր իշատե տեղեկութիւն ունեցող ճշմարտասիրաց . Հոովմայ պապերուն այսպիսի բացարձակ իրաւասութիւն ունենալը ճանչցումն էր երբէք հին դարերուն մէջ : Կընարցընենք զոնէ մեր ազգին եկեղեցական պատմութիւնը զիտցողներուն . Մեր նախնի հայրապետք եւ վարդապետք որչափ ալ տեղ տեղ *պատուաւոր* յիշատակութիւն մը ըրած ըլլան ըստ արժանւոյն՝ սրբոյն Պետրոսի յաջորդացը վրայ, Երբ կամ ո՞ր ըսած ունին թէ անոնք *միայն* են *զուրի* ընդհանրական եկեղեցոյն Քրիստոսի, եւ թէ ո՞վ որ անոնց ջինազանդիր՝ իրրեւ օրինաւոր եւ մի միայն հովուապետաց, *Ներձուածող է, Ներկաիկոս է, մոլորեալ է* : Ոչ ուրեք եւ ոչ երբէք : Այնչափ հեռու էին մեր հնասեր եւ բարեսէր հայրապետները այդպիսի վարդապետութենէ որ երբ զիտնային թէ ատեն պիտի գայ որ իրենց այն մէկ երկու պատուաւոր յիշատակութիւններէն առիք պիտի առնեն ոմանք յազգայնոց եւ յօտարաց պնդելու թէ Պապերը գերագոյն եւ բացարձակ իշխանութիւն եւ իրաւասութիւն ունին ի վերայ ամենայն եկեղեցեաց, — ուստի եւ ի վերայ Հայաստանեայց եկեղեցոյ, — ամենեւին տարակոյս չունինք որ այն պատուաւոր խօսքերն անգամ ըսելէն զգուշացած կըլլային : Նորէն կըսենք, եւ կընանք շատ ապացոյցներով հաստատել թէ խաղաղասէր պատրիարքներն ու եպիսկոպոսները, որ եւ իցէ ազգէ, որ եւ իցէ ժամանակ, ամենեւին դժուարութիւն չեն ցուցուցած ճանչնալու թէ Հոովմայ արոռը *առաջնածին* մը ունի իրենց մէջ *Ի պատիւ* յիշատակի սրբոյն

Պետրոսի, եւ քաղաքին ալ նիւրական համբաւոյն : Եւ այս բանիս հաստատութիւն է մասնաւորապէս մեր ազգին հայրապետներէն ու կարուղիկոսներէն ոմանց ջափաւոր պատուով յիշատակութիւն ընելը Հոովմայ արոռոյն եւ պապերուն վրայ, մանաւանդ Կիլիկեցոց ատեններն ու վերջի դարերուս մէջ : Բայց *պատիւ* ընելուն եւ *հպատակութիւն* ընծայելուն մէջ եղած տարբերութիւնը անհուն է : Անաւասիկ աշխարհական քաղաւորք ու կայսերք ալ իրարու պատիւ՝ մեծարանք կընեն, միքէ անով իրարու հպատակ կըճանչցուին : Ո՞ր Հայը կընայ ըսել խղճմտանքով թէ Հայոց կարուղիկոսները *հպատակէր* են ատենով Հոովմայ պապերուն, ու յետոյ կամ անոնք եւ կամ անոնց յաջորդները զուրի քաշեր ապստամբեր են : Գիտենք թէ եղած են բարեմիտ եւ կամ կասկածելի պատմիչներ որ վերջին դարերուս կարուղիկոսներուն առ պապն զրած թղբերուն մէջի *խոնարհական* խօսքերը *հպատակութեան* տեղ առեր են : Բայց այն թղբերը ընդունող պապերն անգամ այնպէս չեն հասկըցած անոնց խօսքերը, հապալով խոնարհական կամ քաղաքաւարական ու եղբայրսիրական խօսքերու տեղ դրեր են . ապա թէ ոչ, միքէ մէկէն ի մէկ չէին աճապարեր մարդիկ յուղարկելու եւ իրրեւ իրենց սեպհական վիճակ՝ այնպէս կառավարելու զՀայաստան . կամ թէ զոնէ կոնդակ կըզգրէին Հայոց որ այսուհետեւ իրենց կարուղիկոսին ընտրութիւնը պապին հրամանաւ ու հաճութեամբն ըլլայ, ինչպէս որ ուրիշ ամենայն հոովմեականներէ կըլլանանչեն : Իսկ արդ պապերուն կողմանէ այսպիսի պահանջմունք չէ եղած . ըսել է թէ յայտնի է որ Հայոց կողմանէ է որ ամենեւին նշան մը չէ տրուած անիկայ յանձն առնելու . չէ եւ Հոովմայեցիք միշտ պատրաստ էին եւ են այն պահանջմունքն ընելու, ինչպէս որ յայտնի եղաւ նաեւ մեր օրերը՝ երբոր այժմու Պիոս Թ՛ պապին նուիրակ Ֆերրիերի կարդինայը Պօլիս գնաց :

Կընայ մէկը հարցընել հոս մեզի թէ « Հապա *Գաշանց Թղթին* համար ինչ կըսես որ ազգին մէջ հարիւրաւոր տարիներէ ի վեր ընդունելի եղած, Պօլիս տպուած Ազարանգեղոսի պատմագրութեանը ետեւէն այն ալ տպուած, եւ ընդհանրապէս իրրեւ սրբոյ Լուսաւորչին եւ սրբոյն Սեղբեսարոսի մէջ դրուած ուխտ ու դաշինք ճանչցուած է . եւ միքէ այն Գաշանց թղթէն ջիմացուիր որ մեր Լուսաւորիչը, ուստի եւ իր յաջորդները, ի սրբոյն Սեղբեսարոսէ ընդունեն են բացարձակ

եւ անկախ իշխանութիւն ի վերայ Հայաստանեայց եկեղեցւոյ : »

Այս հարցման տալու պատասխաններս չաւ հասկընալու համար գիտնալու է որ եւրոպայի ստուածարանից մէջ առ հասարակ ճանչցուած ճշմարտութիւն մըն է թէ ուրերորդ դարուն վերջերք, Հռովմայ արքայոյն ղիւանադպիրներէն ոմանք, եւ յանուանէ Իսիդորոս Մերքաբոր անուով մեկը, եօրանատունի չափ սուտ կոնդակներ շինած են յանուն այլ եւ այլ պապից՝ ի սրբոյն կոչեմայ մինչեւ սրբոյն Սեղբեստրոսի անունովը, որ մինչեւ հիմա կան Սուտ կոնդակաղբեր (*fausses décrétales*) մակագրով հաւարուած : Այն կոնդակները շինողներուն մի միայն ղիտաւորութիւնն է եղեր՝ պապերուն իշխանութիւնն ու իրաւասութիւնը մեծցընել, ու բովանդակ տիեզերական եկեղեցւոյն Քրիստոսի վրայ տարածել, այնպէս որ ուրիշ ամենայն պատրիարքներն ու արքեպիսկոպոսներն ալ իրենց իշխանութիւնը պապերէն առած սեպուելով՝ անոնց հնազանդին ու հպատակին ամեն բանի մէջ : Միջին դարու պէս տգիտութեան ժամանակ ղիւրին եղաւ այն անարժան խարերաներուն իրենց անճեքեր խարդախութիւնը պարարկել, եւ այն կոնդակներուն վկայութիւնը իբրեւ վաւերական խօսքեր ընդունելի ընել իրենցմէ անելի տգեաներուն : Ուստի եւ իրաւամբ կրսէ Պերժիէ գաղղիացի աստուածաբանը թէ « Բաւական է այս միայն ղիտնալը թէ « ալ հիմա մեկ մարդ մը ջկայ այնչափ տգեա՝ որ « հաւատոյ մասի մը կամ եկեղեցական բարեկարգութեան խնդրոյ մը համար այն սուտ « կոնդակագրքէն վկայութիւն բերէ՝ որ ուրերորդ « դարուն վերջերք շինուած է : »

Արդ ո՞վ որ այն սուտ կոնդակներէն մեկը կարդային ետեւ՝ մեր մէջ գտնուած Դաշանց բուզըք աչքէ անցընէ, անկարելի է որ մեկին ի մեկ ջնասկընայ թէ անիկայ ալ նոյն քուրպէն ելած՝ բոլորովին շինծու եւ ամենեւին անհիմն կոնդակ մըն է. եւ այն՝ ոչ երէ ուրերորդ կամ իններորդ դարերուն մէջ շինուած, հապա իրէք չորս հարիւր տարի ալ ետքը՝ խաջակիր գօրաց արեւմուտքէն արեւելք գնացած ատենը, այսինքն մեր Ռուբինեանց ժամանակները՝ որ մեծ յոյս ունէին եւրոպայի տերութիւններէն հօգօր պաշտպանութիւն մը գտնելու ընդդէմ ալլազգեաց՝ միջնորդութեամբ պապին Հռովմայ :

Գիտէին մերոնք Ագարանգեղոսի, Չենորայ, Բուզանդայ, Խորենացւոյն պատմութիւններէն եւ

ազգային ընդհանուր աւանդութենէն թէ սուրբ Լուսաւորիչն մեր Հոռմ գնացեր է Տրդատայ հետ, եւ այն առթով *գաշն* սիրոյ եւ բարեկամութեան հաստատուեր է անոնց եւ Կոստանդիանոսի ու սրբոյն Սեղբեստրոսի մէջ : Այս հաստատուն հիման վրայ, տեսնելով որ արդէն կրգտնուին սուտ կոնդակներ այլ եւ այլ հին պապերու անունով մեկուն մեկային արուած (գօր թերևս մերոնցմէ ոմանք վաւերականի տեղ ալ կրգնէին), շինելը յարմարացուցեր են նոյնպիսի մեծարան ոճով՝ բայց ռամկական շարադրութեամբ ու այն ատենի տգիտական կարծիքներով լեցուն կոնդակ մը, որ եւ բռներ է *Քուրթ գաշանց* : Արդ Տրդատայ եւ Կոստանդիանոսի մէջ եղած գաշնադրութեանը խօսք չունինք, որպէս եւ ոչ Սեղբեստրոսի եւ Լուսաւորիչին մէջ հաստատուած բարեկամութեանը. բայց թէ այն գաշնադրութեան եւ բարեկամութեան պայմանները Դաշանց բոլորն մեջի եղածներն ըլլան՝ ամենեւին ջնք կրնար ընդունիլ : Ինքն իսկ Հ. Միքայիլ վարդապետն Չամչեան, որ իբրեւ հոռովմական՝ կրջանայ այն բուզըք իբրեւ վաւերական գրուածք երեւցընել, մեջի ալլանդակ գրուցուածքներէն ստիպուած է ըսելու թէ « Արժան է ղիտել ղի այս բուզը գաշանց յանցանել ժամանակաց ձեռաց ի ձեռս « շրջելով՝ *բաղում* ալլայութիւն է ատեալ, եւ « *բաղում* խանգարմունք մտեալ են յայն, մա- « նաւանդ յեղանակ խօսից *բարգոմեան* բանից, « գորս երկար լինի քննել : » — Մեր ընթերցողաց փոքրիկ ճաշակ մը ըլլայ այն կոնդակին ալլանդակ խօսքերուն եւ ընդհանուր ոճոյն եւ հոգւոյն՝ այս հատուածը որ հոռովմականք վկայութիւն կրբերեն պապին իրաւասութեանը, ոչ թէ վաւերական համարելով, հապա ի Պօլիս տպուած ըլլալուն՝ ազգին մէջէն ոմանց վաւերական երեւցած ըլլալը ցուցընել ուզելով . « Ստորագրեցաւ « հրովարտակս հրամանաւ իմով *մեծի պապուս* « Հռովմայիցոց Եստրիոսի, որ եւ Սեղբեստրոս, « արքուակալի գլխաւորաց ատարիւցն Պետրոսի « եւ Պօղոսի, որ *Երկրաւոր եւ Երկնաւոր բանալեօք* « *ունիմ իշխանութիւն յարեւմտայ մինչեւ յարեւելս* « Ի ՂԵՐԱՅ ԱՄԵՆԱՅՆ ԱՅԳԱՅ ՔՐԻՍՏՈՍԱՅԿՈՒՄԵՆԵՅ, « կապօղ եւ արձակօղ ի յերկինս եւ ի յերկրի, « եւ ՂՐԱՄԵՆԱՆԱՅ ՀՁՐ ՅԸՆԳՂԱՍՏՈՒԲ ԵՎԵՂԵՅՍ « ՔՐԻՍՏՈՍԻ... Եւ *Ինքնազուտ պատապարդոյ Հռովմայ՝ Սեղբեստրոս, եւ ԱՄԵՆԱՅՆ ԱՅԽԱՐՀԻ... յօ- « ժարեցայ ի պատուել զմեծ խոստովանօղս « Քրիստոսի զգահակիցս իմ զԳրիգորիոս...*

« կարգեցաք զնա մեզ զլխափոխան, եւ ճրամա-  
 « նանան ամենայն միջնաշխարհիդ : » Ո՞չ արգարէն  
 ասոնք այնպիսի խօսքեր են որ նախ՝ այն ատենի  
 պատերեւ եւ ոչ մէկուն մտքեն անգամ չէին կրնար  
 անցնիլ որ ըսէր. երկրորդ՝ Պաշանց բղբին մեջ  
 ալ ետքէն մտած են ըսելը կարելի չէ, որովհետեւ  
 բովանդակ հիւսուածքը այս ոճով է. երրորդ՝  
 երէ այդ խօսքերը անհիմն եւ բոլոր Պաշանց  
 բողբը շինծու չըլլային, սուրբ Լուսաւորչին  
 որդիքն ու բոռունքը իրմէ ետքը ինչո՞ւ համար  
 Կեսարիա պիտի երբային պատրիարքական ձեռ-  
 նադրութիւն առնելու համար. եւ չորրորդ, սուրբ  
 Լուսաւորչին մեր երէ ամենայն միջնաշխարհին,  
 այսինքն բովանդակ Հայաստանի, Վրաստանի,  
 Փոքուն Ասիայ, Միջագետաց եւ Ասորոց ճրա-  
 մանանան եր՛ իբրև զլխափոխան պապին, ինչո՞ւ  
 համար այն երանելին ոչ երբէք մտաբերեց իր  
 իշխանութիւնը բանեցընել այն երկիրներուն եկե-  
 ղեցեացը վրայ : Թող Պաշանց բղբոյն մեջ խառ-  
 նափնդոր ժամանակագրութիւնը, տգիտական  
 եւ անհիմն պատմութիւնները, գաղղիարէնէ առ-  
 նուած բարբարոս բառերը, եւ այլն եւ այլն, որ  
 մէյմէկ անմխտելի ապացոյցներ են շինծու բան  
 ըլլալուն :

Մինչեւ հիմա ըսածներես յուսանք թէ ըստ  
 բառականին հասկըցուցաւ թէ պապերուն ուրիշ  
 ամենայն եկեղեցեաց եւ պատրիարքաց վրայ տի-  
 րապետելու ջանքը անիրաւ եւ անտեղի բան է,  
 եւ թէ անոնց ջննագանդող կամ ջնպատակող  
 մարդկանց *հերձուածող* եւ *հերեակիտական շարափառ*  
 ըսողը՝ իրացընէ ինքն կրնայ ըսուիլ *հերձուածող*  
 եւ *մողրեալ* յողղափառ վարդապետութենէ եկե-  
 ղեցոյն Քրիստոսի :

Թերեւս ջերմեռանդ պատրականաց եւ միամիտ  
 հոովմեականաց համար այս ըսածնիս հայհոյական  
 բան մը երեւնայ. զարմանք չէ. այնչափ ըսուեր  
 է իրենց ասոր հակառակ վարդապետութիւնն որ  
 մտքերնուն մեջ անջնջելի կերպով տպաւորուեր  
 է թէ արքայութեան բանալիները պապին ձեռքն  
 են : անիկայ ալ անոնց միայն կըրանայ դոները՝  
 որոնք որ իրենց ազգային սեպնական հովիւներէն  
 ու հովուապետներէն զլուխ կըքաշեն, կըխարշին,  
 կըփախչին, եւ հոովմեական քարոզչաց ետեւեն  
 կերբան : Ողբայլն վիճակ, եւ ամենայն ազգասեր  
 եւ ճշմարտասեր սրտից մեծապէս ցաւայի :

Յաւակից է մեզի այս կողմանէ նաեւ նոյն բա-  
 րելիշատակ Հ. Միքայել վարդապետն Չամչեան :  
 Միայն թէ անիկայ Պաշանց բղբոյն գէր ըստ մա-

սին վաւերականութեանը վրայ տարակոյս չցու-  
 ցընելովը՝ կըպնդէ թէ Հայք ոչ միայն Հոովմայ  
 արոտոյն առաջնութիւնը կամ նախապատուու-  
 րիւնը կընդունին, նապա նաեւ անոր *զերպոյն*  
*իշխանութիւնը* ի վերայ ամենայն եկեղեցեաց քրիս-  
 տոնէից : Երէ ինքը հոովմեական եկեղեցոյ նպա-  
 տակ մնալու միտք չունենար, յիրաւի մեծ նա-  
 խատիւնք կըբերէր իրեն հմտութեանը այսպիսի  
 կարծիք ունենալով : Քանի մը սովորական պար-  
 ձած վկայութիւններ ալ կըբերէ ի գրոց նախնի  
 վարդապետաց որ, ինչպէս առաջ ըսինք, Հոով-  
 մայ արոտոյն եւ պապերուն վրայ *մեծարանօք* եւ  
*պատուով* ըսուած խօսքեր են միայն. ամենեւին  
 իրաւարանական ճշգուրթին չունին, ոչ երբէք կը-  
 ցուցընեն թէ Հայաստանեայց եկեղեցոյ առաջ-  
 նորդները այն կերպով հպատակ են եղեր Հոով-  
 մայ արոտոյն՝ ինչ կերպով որ կընպատակին անոր  
 այժմու հոովմեական Հայոց քանանաներն ու  
 եպիսկոպոսները, եւ ոչ երբէք կըվարդապետեն  
 թէ ով որ պապին իշխանութեանը ջննագանդիր՝  
 դժոխք կերբայ : Անկեց անելի ճիշդ էին, երէ  
 ջննք սխալիր, անցեալ տարի առ արքեպիսկո-  
 պոսն Փարիզու արուած տետրակին խօս-  
 քերը. սակայն պապերուն տիրապետութենէն  
 իրաւամբ տարտափող Լուսաւորչական եղբարք  
 մեր՝ իրաւամբ ալ վախցան թիչ մը որ չըլլայ թէ  
 Հայաստանեայց եկեղեցին ատենով Հոովմայ  
 պապերուն իշխանութեանը տակ եղած երեւնայ  
 ինչ եւ իցէ կերպով՝ այն տետրակը կարդացող-  
 ներուն : Բայց երբ տեսան որ այն տետրակին  
 վերջի խօսքերուն ամենեւին ջնանեցան պապա-  
 կանները, մերոնց սիրտը հանգչեցաւ, եւ ազգին  
 մեջ ծագած այլ եւ այլ խօսակցութիւնները դա-  
 դրեցան :

Չամչեան վարդապետին միտքը զլխաւորապէս  
 Հայաստանեայց եկեղեցոյ ուղղափառութիւնը  
 ցուցընել ըլլալով ընդդէմ ջարախօսաց ազգիս,  
 այսինքն եւրոպացի քարոզչաց եւ անոնց ձամբան  
 բռնող լատինահայ կրօնաւորաց եւ քանանայից,  
 երկրորդաբար ալ մեր ազգին Լատինացոց եւ  
 կաթոլիկաց դէմ ունեցած անհաշտ ատելութիւնը  
 պակասընել ուզելովը, զարմանք չէր որ այն  
 ոճով խօսէր՝ ինչ որ բաներ է իր *Վանանին* մեջ :  
 Այս տեղեկութիւնը տալեն ետեւ՝ կարծեմ թէ  
 կրնանք իրեն այս նիւթիս վրայ ըսած մէկ քանի  
 նշանաւոր խօսքերը մեջ բերել, իր հոջակաւոր  
 ՎԱՀՍԵ ՌԵՂԱՍՏԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ  
 ըսուած գրքին խօսքերէն քաղելով, առանց մոռ-



նալու քե հոովմէական հայ վարդապետի խօսքեր են : Մանաւանդ որ անով նոյն վարդապետին իշատագովութիւն իրաւանց Լուսաւորչական արոճոյն ըսած ուրիշ խօսքերը աւելի աչ գօրաւոր եւ նշանական պէտք է երեւնան բան հասկըցողներուն : Չամբհան վարդապետին մէկ հնարքը այս է, որ Հոովմայ պապերուն կամ ընդհանրապէս ամենայն հոովմէականաց բունած ճամբան պախարակելու ատեն՝ մեղադրութիւնը մասնաւոր կերպով բաղերայից՝ այսինքն արեւելք գնացող լատին քահանայից, եւ միսիոնարաց՝ այսինքն լատինահայ քահանայից վրայ կը ձգէ :

« Գտանին ոմանք, մանաւանդ բաղերայք եւ « միսիոնարք հանդերձ արբանեկօք իւրեանց, « որոց տեսեալ զողջմտութիւն Հայոց եւ զմտեր- « մութիւն առ զանն Հոովմայ (որ շատ տարբեր է « անոր հպատակէն), սկսանին պատճառանս « պատճառել՝ ասելով քե « Գիտեմք եւ մեք զի « Հայք յառաջին ժամանակս ընդունեին զհախա- « զանութիւն առաքելական արոճոյն (զհախազա- « նութիւն կարգի եւ ոչ քե իշխանութեան), բայց « այժմուս չէ այնպէս : . . . Հայք զառ ինախնեաց « իւրեանց իշեալ համարումն ոչ են փոխեալ եւ ոչ « քողեալ . այլ որպէս էր ի սկզբանէ անտի՝ այն- « պէս է եւ այժմ . . . (Միայն քե) որք զայդպիսիսդ « բարբառին դասք բաղերայից եւ միսիոնարաց՝ « ճշմարտապէս պատճառ եղեն ի քանի մի դա- « րուց եւ այսր՝ զի սեր Հայոց առ զանն Հոովմայ « հովասցի կամ պաղեսցի . . . Վասն զի զայնպիսի « տարադէպ ընթացս վարեն ի բանս եւ ի գործս, « որով յատելութիւն զրգոնն զոգիս բազմաց՝ բող « քե ի հովութիւն սիրոյ : Երէ ինչ ինչ յարարուա- « ծոց դոցա լիցի ինձ առաջի մատուցանել, մի « ինչ դժուարեսցին . զի երբ ինքեանք ի մեր « ազգի վերայ զամենայն պակասութիւն բարդեն « հանդերձ ծանր ծանր բշխամանօք, եւ հերետի- « կոս եւ հերձուածող անուանակոչութեամբ, չու- « նին իրաւունս դժկամակ լինելոյ՝ յորժամ մեք « առանց այնպիսի ծանր գրուցաց, փոքր ի շատէ « յառաջ բերցուք զայնպիսի գործս եւեր՝ որովք « խրտուցեալ են եւ խրտուցանեն զազգն :

« Առաջին տարադէպ ընթացք նոցա այս է զի « կամին ինքեանս որսալ գծողովորդն, այնպէս « զի մի այլ եւս հպատակեսցեն անմիջական « առաջնորդաց իւրեանց, այլ լատին առաջնոր- « դաց . . . Արդ յայտ է քե այս գործ քանի խրտու- « ցանել զազգն . վասն զի ազգն զիւր առաջ- « նորդս եւ անմիջական հովիւս ունելով, պարտի

« անմիջապէս նոցա հպատակել, եւ հանդերձ « առաջնորդօքն իւրովք պարտի հաւատալ « ի գլուխն ամենայնի ի Քրիստոս . . .

« Երկրորդ տարադէպ ընթացք նոցա այս է զի « զայնպիսի հնազանդութիւն պանանջեն առ զանն « Հոովմայ՝ որ արտաքոյ ելանէ իրաւանց, եւ չէ « երբեք լեալ ի մեջ եկեղեցւոյ յառաջին ժամա- « նակս . . .

« Երրորդ տարադէպ ընթացք նոցա այս է, զի « երբ նշմարեն ի վերայ մասնաւոր անձանց « ոմանց ինչ ինչ անկատարութիւն, եւ կամ յա- « լետ տեսանեն ինչ ի վերայ ազգին որ ոչ հաճոյ « բուիցի յաջս անձանց իւրեանց, եւ աննման « իղեայի իւրեանց, փոխանակ ազդ առնելոյ « սիրով անմիջական հովութիւն նորին ազգի, ին- « քեանք սկսանին հովութեան քեկն ածել՝ « ասելով քե « Առեալ է մեր իշխանութիւն ի սրբա- « զան պապէն (եւ առնուն իսկ) այդպէս առնելոյ, « եւ իրաւունք կան ի ձեռին մերում միսիոնա- « րական իշխանութեամբ մինչեւ զհովիւսդ իսկ « զձեր կառավարելոյ : » Եւ ոչ այսչափ միայն, « այլ եւ յաւելուն՝ քե « Որ որ հնազանդեսցի « հովուացող այդոցիկ արեւելից՝ մեղանչէ, եւ « այն մանուշափ մեղօք : » Չայս հանապազ աջօք « տեսանեն եւ ձեռօք շոշափեն յորոցմիջի կայցեն « բաղերայք : Արդ յայտ է քե ի տեսանել հովուաց « ազգին զայդպիսի բունակալութիւն, եւ ի լսելն « զայդպիսի ասացուածս վտարանջութեան, « ի հարկէ զայրակղին . . . քանզի զիտեն զի ին- « քեանք են անմիջական հարազատ հովիւ ազգի « իւրեանց, եւ զի առանց զիտութեան իւրեանց, « կամ առանց խափանածոյ հովուական պաշ- « տաման իւրեանց, ոչ է կարող առանձին որ « օտարազգի գալ եւ հովութիւն առնել ի վերայ « ոչխարաց իւրեանց . . .

« Բայց զինչ տան պատասխանի բաղերայք . « « Մեք իրաւամբ զայս այսպէս առնեմք . վասն « զի հովիւք Հայոց հերետիկոս գոյով՝ կորուսեալ « են զիրաւունս իւրեանց » : Այս պատասխանի « առաւել տգիտական է քան յանդգնական . զի « երէ իրաւագիտութեան խելամուռ էին՝ ոչ կա- « րէին ասել զայդ : Քանզի ըստ իրաւանց եկե- « ղեցւոյ՝ հովիւ որ որ յականէ յանուանէ չիցէ « հրատարակեալ հերետիկոս, չէ կորուսեալ իւր « զիւր իրաւունս : Թող նախ կարող լիցին ցու- « ցանել բաղերայք՝ քե ազգն Հայոց կամ հովիւք « ազգին յականէ յանուանէ մերժեալ են յեկեղե- « ցւոյ (օրինաւոր ընդհանուր ժողովով), եւ ապա

« իշխեսցեն այդպիսորևն ճոխանայ : Երե ար-  
 « դարև այդպիսի տխմարութեամբ վարելն բնա-  
 « կիջք Երուսիոյ, վեր ի վայր լինելն ամենայն  
 « քազաւորութիւնք արեւմտեայց... : Ուր բողից  
 « զի հովիւք Հայոց *Էւ ոչ իսկ արատ ունին* հերետի-  
 « կոսութեան կամ հերձուածողութեան :

« Չորրորդ տարադեպ ընթացք նոցա այս է,  
 « զի ոչ փոյք է նոցա քէ իշխանութիւն սրբազան  
 « պապին ծանուցի այլոց, կամ գլխաւորութիւն  
 « նորին երեւեցի, այլ ընդ նովին պատրուակա  
 « ինքեանք մեծացին. քանզի այդ պատճառանք  
 « իմն է՝ քաջ ծանուցեալ ամենեցուն, եւ այդ-  
 « պիսի պատճառանօք կամին եւ հնարին զի տի-  
 « րեսցեն ժողովրդեան. զասր նոցին զգեցցին,  
 « զկարն նոցուն ղիւեսցեն, եւ զնոցայսն իւրա-  
 « ցուցեն. ահա այդ է ըզձօրքիւն եւ ղիտումն  
 « դոցա բանիւք եւ արդեամբք, որպէս յայտ է  
 « տեսողաց եւ լսողաց, եւ ոչ իսկ անձանց իւ-  
 « րեանց անյայտ. զի ըստ առածին՝ « Նիզակ  
 « ջամփոփի ի քսակ : » Եւ ի վարել սոցա այս-  
 « պէս՝ ո՞րք այնուհետեւ անսաացէ նոցա : Իսկ  
 « նոցա տեսեալ զի ջանսան ինքեանց, սկսանին  
 « այսր անդր բողոք ունել քէ դոքա մերձեն զա-  
 « ռաքելական արոռն, եւ այլն, որպէս քէ յան-  
 « ձինս նոցա բազմեալ իցէ զանն առաքելա-  
 « կան : ...

« Ոմանք յաստուածարանից, որք ոչն են զի-  
 « տակ քէ յինչպիսի վիճակի իցէ ազգն Հայոց, եւ  
 « առանկ եւս ոմանք ի բաղերայից՝ որք ոչն  
 « կամին զիտել զորպիսութիւն ազգին՝ զոր աջօք  
 « տեսանեն, քառեակ առարկութիւնս կամ ընդ-  
 « ղիմութիւնս յեղեղեն՝ առ ի տեսանել քէ Հայք  
 « բաժանենն իցն յառաքելական արոռոյն... :  
 « Առաջին ղիմադրութիւն այս է՝ քէ ընդէր  
 « ոչ յիշեն Հայք ի պատարագի զանուն պապին :  
 « Չայս բան յորժամ առաջարկեն աստուածա-  
 « բանք, ոչ այսպիսի անորոշ եղանակաւ խօսին,  
 « այլ որոշեալ ոճով բարբառին ըստ կարգի  
 « իրաւանց՝ քէ ընդէր կարողիկոսն կամ պա-  
 « տրիարքն Հայոց ըստ հին սովորութեան եկե-  
 « ղեցոյ՝ ջառնէ զայս յիշատակ : Իսկ բաղե-  
 « րայք՝ որք ոչ նուրբ հային ի գննութիւն իրա-  
 « ւանց, զայսօրինակ բարբառին, քէ ընդէր  
 « քանանայք Հայոց առ հասարակ եւ ժողովուրդք  
 « ոչ յիշատակն զանուն պապին, այլ զիւրեանց  
 « կարողիկոսունս եւ զպատրիարքս : Աստուա-  
 « ծարանից ասացուածն ըստ ինքեան ունի ինչ  
 « տեղի իբրև համաձայն իրաւանց (ոչ քէ *իրաւանց*

« այլ բերես վայելչութեան եւ սիրոյ). իսկ բաղե-  
 « րայիցն ամենայն իրօք անտեղի է իբրև ար-  
 « տաքոյ իրաւանց : Եւ քէ զիւրոյ, ծանիր : Հին  
 « սովորութիւն էր ի մեջ եկեղեցոյ, զովելի յոյժ  
 « եւ վափաքելի, զի իւրաքանչիւր պատրիար-  
 « քունք յիշէին զայլ պատրիարքունս... : Իսկ  
 « քէ արդեօք նաեւ կարողիկոսն Հայոց՝ որ պա-  
 « տրիարք ազգին կոչիւր՝ ունէր ընդ այս գայս-  
 « պիսի տուրեւառ կամ կապակցութիւն՝ քէ ոչ,  
 « բնաին նշան ինչ ոչ ունիմք, ոչ ի գրոց եւ ոչ  
 « յաւանդութեանց : Չայս միայն զիտեմք՝ զի  
 « Հայք ընդհանրապէս բազում մաղբանս եւ  
 « աղօթս ունին վասն առաջնորդաց իւրաքանչիւր  
 « եկեղեցեաց, եւ վասն լրութեան բովանդակ եկե-  
 « ղեցոյ : Այսպիսի ընդհանրական յիշատակու-  
 « րիւնք ի պաշտամունս Հայոց ի սկզբանէ հետե-  
 « կեալ եւ միշտ ի գործ ածեալ են. բայց ոչ ու-  
 « րեք գտանի ի հին օրինակս պաշտամանց մե-  
 « րոց՝ քէ զայլոյ ազգի հայրապետս եւս յանուանէ  
 « յիշատակեալ իցն երբէք : Իսկ հասարակ  
 « եպիսկոպոսաց եւ քանանայից յամենայն ազգս  
 « այս էր սովորութիւն, զի իւրաքանչիւր զիւ-  
 « րեանց սեպհական պատրիարքն կամ կարու-  
 « ղիկոսն յիշէին. եւ չէ լեալ երբէք լսելի՝ քէ  
 « քանանայ ոմն յիշեսցէ՝ բաց ի պատրիարքէ  
 « իւրմէ՝ զայլ որ պատրիարք եւս, կամ փոխա-  
 « նակ զիւր պատրիարքն յիշելոյ՝ զայլ որ յիշես-  
 « ցէ, մանաւանդ ի մեջ Հայոց բնաին անյուր է  
 « այս : Եւ զի այս այսպէս է, զիւրոյ յապա բա-  
 « ղերայք (իմն *հռովմէականք առ հասարակ*) ստի-  
 « պել յօժարին զքանանայս Հայոց քէ պարտ է  
 « ձեզ յիշել զպապն այնպէս՝ որպէս քէ գլխաւոր  
 « նշան ուղղափառութեան համարեցի այդ :  
 « Չայդպիսի նորալուր նշան ոչ երբէք ի գործ  
 « ածին նախնի սուրբ հարք մեր... :

« Երկրորդ ղիմադրութիւն այս է՝ քէ ընդէր  
 « կարողիկոսունք Հայոց կամ պատրիարքունք  
 « նոցա ոչ գրեն բողոք յարոռն առաքելական,  
 « որ քէ եւ չիցէ հարկաւոր, գեր նշան ինչ սի-  
 « րոյ է : Այս ղիմադրութիւն ոչ ինչ ընդհատ  
 « երեւի յառաջնոյն. եւ երէ ի նիւրն հայեցուք՝  
 « քան զայն վտանգաւոր է, իբր դրօշակ ապրս-  
 « տամբութեան կարծեցեալ առաջի այլոց. եւ  
 « իրօք է դժուարին քան զնախկինն : Չի որով-  
 « հետեւ ազգն ողջոյն ընդ տերութեամբ այլոյ  
 « կայ, ոչ կարեն համարձակ բողոք գրել, մա-  
 « նաւանդ քէ եւ ոչ իսկ լռելայն կամ գաղտ. զի  
 « այս յաւետ ծանր վտանգի է առիք ի միոյ կող-

« մանեք քան զյայտնի գրեալն : Զի բէ իմասցին  
 « այլազգիք՝ եքէ այսպիսի կցորդութիւն ունին  
 « Հայք ընդ արեւմտեայս, իսկ եւ իսկ անհնարին  
 « հայաձանս յարուցանեն ի վերայ նոցա՝ իբրեւ  
 « ի վերայ յայտնի ապստամբաց : եւ սակայն եքէ  
 « վտանգ լինեք, եւ եքէ ջլինեք, այս միայն կարէր  
 « արգիլել զերբեւեկութիւն քրքոց, զի Հայք ընդ  
 « իշխանութեամբ այլոց գոյով՝ ոչ կարեն ի սոյն  
 « բերիլ. եւ ի կողմանէ Հռովմայ եւս ոչ կարեն  
 « իրաւամբ պահանջել զայս ի Հայոց : եւ այսմ  
 « քաջ զիտակ են նաեւ ինքեանք, եւ զփորձն  
 « իսկ առաջի աջաց իւրեանց ունին. վասն զի  
 « ի Ֆրենկիստան եպիսկոպոսունք՝ որ կան ի մէջ  
 « քաղաւորութեան քրիստոնէից, զաղղիացւոց,  
 « զերմանացւոց եւ այլն, ոչ կարեն ինքնագլուխ  
 « բուղք գրել առ զահն առանց զիտութեան քա-  
 « զաւորութեան : Արդ եքէ յերոպիա ի մէջ քրիս-  
 « տոնեայ քաղաւորութեանց այսպիսի զգուշու-  
 « րիւնք պահին, զինչ ունիս ասել վասն արեւե-  
 « լեայց եղելոց ընդ իշխանութեամբ այլազգեաց :  
 « Այս զլուխ դիմադրութեան զկարօտի երկար  
 « խնդրոց. բայց բուի բէ հակառակորդք սովին  
 « բանիւք այլ ինչ կամին ի ներքս մուծանել.  
 « այսինքն է զուցէ յայն սակա բախանձէին զհար-  
 « կաւորութիւն քրքակցութեան, որպէս զի կա-  
 « բուղիկոսն Հայոց ի գլխաւորագոյն առքի, որ  
 « է ժամանակ նորոգ նստելոյ յարոս, գրով ծա-  
 « նուցէ պապին զընտրութիւն իւր, եւ այսպէս  
 « առ սակաւ սակաւ սովորութիւն լիցի ընդունել  
 « Հայոց ի Հռովմայ զհաստատութիւն պատրիար-  
 « քութեան, եւ կարգաւորութեան նորա սպասել :  
 « Բացայայտ ասացից. կամին զի հաստատութիւն  
 « արոտոյն Հայոց յամենայն ընտրութեան կա-  
 « խումն ունիցի ի Հռովմայ : Այլ չիք այսմ տեղի.  
 « զի Հայք ունին անդտին ի Սեղբեստրոսէ (ըստ  
 « աւանդութեան յետին դարուց) զի կարողիկո-  
 « սունք ընտրութեամբ ազգին լիւրեանց եպիս-  
 « կոպոսաց առնուցուն զձեռնադրութիւն, որ-  
 « պէս յայտնի աւանդի ի Թուրքն դաշանց (որում  
 « ամենեւին չէին կարօտ). եւ զայն իրաւունս  
 « պահեալ են եւ պահեն անխախտ մինչ ցայժմ,  
 « ըստ որում եւ ոչ Յունաց տեղի ետուն յաւուրս  
 « Նորհալոյն՝ երբ կամին նորա զի ընտրու-  
 « րիւն կարողիկոսին կախումն ունիցի զկայսե-  
 « րեն եւ զպատրիարքեն : Նաեւ ի ժամանակս  
 « Կիլիկեցւոց, յորում ըստ բաղերայից՝ կարու-  
 « ղիկոսունք ուղղաբառ էին, ոչ խնդրէին զհաս-  
 « տատութիւն պատրիարքութեան իւրեանց ի

« սրբազան պապեն. ուստի եւ չէ արժան երկա-  
 « րել զբանս յաղագս այսորիկ :  
 « Երրորդ դիմադրութիւն այս է, զի եքէ կոն-  
 « դակ ինչ հասցէ առ Հայս ի քահանայապետեն,  
 « ջրնդունին զայն, կամ զոնէ կասկածի պապն  
 « զընդունելութենէ նոցա, եւ վասն այն յետս  
 « կասի ի գրելոյ : Այդ բան եքէ ունիցի ինչ ստու-  
 « զութիւն, ամենեւին այլազգ է քան զոր կարծեն  
 « ջարախօսք. զի ոչ եքէ ջրնդունին, այլ զի ոչ  
 « կարեն, որպէս յայտ է ի նախագրելոցս. եւ այս  
 « իսկ է պատճառն, զի յայժմու ժամանակի հազիւ  
 « երբեք գրէ պապն կոնդակ յարեւելս, մանաւանդ  
 « քէ բնաւ երբեք իսկ չգրէ, ոչ վասն անվստա-  
 « հութեան՝ առ որս ունի գրել, այլ վասն զգու-  
 « շութեան յերեսաց այնոցիկ՝ ընդ որոց ձեռամբ  
 « կան յարեւելս քրիստոնեայք. զի որովհետեւ  
 « ընդ իշխանութեամբ այլոց կապեալ կան, ընդ  
 « ելանել բանին ի վեր՝ մինչեւ ի մահ վտանգին :  
 « Բայց դիցուք քէ չկայցէ վտանգ. տակաւին  
 « յայլմէ կողմանէ բաւական դժուարութիւն կայ  
 « առաջի. վասն զի այդ կոնդակ եքէ ընդդէմ  
 « ելցէ հին սովորութեան նոցա, այնպիսի սովո-  
 « րութեան ասեմ՝ որ ոչ է ընդդէմ աստուածային  
 « եւ բնական օրինաց, եւ ոչ ընդդէմ բարի վա-  
 « բուց, ոչ կարեն փոխել. ապա քէ ոչ՝ մեծամեծ  
 « խոռվութիւնք եւ վնասակար գործք զնեա զան,  
 « որպէս յայտ է ի բազմապատիկ փորձոյ բազ-  
 « մաց դարուց : եւ մի ինչ զարմացիս ընդ այս.  
 « վասն զի սմին նման բազում անցք անցանեն  
 « առ բազումս յերոպիա ի մէջ քրիստոնեայ  
 « քաղաւորութեանց, որոց սեպիական պատ-  
 « րիարքն իսկ է պապն, եւ անհամեմատ առա-  
 « լելութեամբ զօրէ բան նորա անմիջապէս առ  
 « արեւմտեայս, բայց այսու ամենայնիւ՝ երբ  
 « առ նոսա կոնդակ ինչ հասանիցէ ի գահէն, ոչ  
 « առժամայն ընդունին, այլ նախ աշխարհական  
 « իշխանք եւ քաղաւորք տեղեացն ընդ քննու-  
 « րեամբ արկանեն, եւ տան քննել աստուածա-  
 « բանից իւրեանց : եւ յետ քննութեան իբրեւ  
 « տեսանեն՝ եքէ օգտէ ինքեանց կամ դիւրաւ  
 « կատարի, բոյլ տան զի հրատարակեսցի. ապա  
 « քէ այլ ազգ իցէ, մանաւանդ քէ ներհակ իցէ  
 « հին սովորութեան երկրին, չտան բոյլ հրատա-  
 « րակելոյ, եւ այսպէս ոչ պահի այն հրաման :  
 « եւ այսմ գլխաւոր պատճառ տան աստուածա-  
 « բանք նոցա, որպէս յիշեցաք ի նշանակեալ  
 « տեղիս, զպահպանութիւն անդորրութեան ժո-  
 « դովրդեան, որում պարտական են ասեն պաշտ-

« պան լինել իշխանք աշխարհաց . եւ զայս նաև  
« գահն այսպէս կամի ասեն, եւ այլն :

« Եւ արդ քաջ կշռեա աղաչեմ. երբ ի մեջ քա-  
« զաւորութեանց քրիստոնէից՝ ուր ամենայն ինչ  
« կարգաւորեալ է, եւ ամենեքին յանդորրու  
« վայելեն, եւ դիւրաւ կարեն կատարել, այսպիսի  
« զգուշութիւն պահի, զինչ ասելի է ապա եկատ-  
« մամբ Հայոց, որոց վիճակ եւ պայման ամե-  
« նայնիւ այլ ազգ է, եւ զայլ օրինակ մեծագոյն  
« զգուշութիւն պահանջէ :

« Կայ աստանօր եւ այլ ինչ եկատելի, ըստ  
« որում ծանուցանեն իրաւագետք Լատինա-  
« ցոց՝ որք փորձ են իրացն : Բազում ան-  
« գամ հանդիպեալ է զի քեպետ յանուն քահա-  
« նայապետին է գրեալ կոնդակ ինչ կամ յղեալ  
« իբրեւ հրաման ի դիմաց նորա, բայց ոչ այնպէս  
« որպէս հրամայեցան ի քահանայապետէն, այլ  
« փոփոխութեամբ իւր, այսինքն կամ յաւե-  
« յուածով կամ նուագութեամբ, կամ այլայլու-  
« րեամբ ոճոյ բանից նորա. փոխանակ բառիս  
« յորդորեմք՝ ղնելով *հրամայեմք*, կամ *վճանք*.  
« փոխանակ բառիս *արժան է՝* ղնելով *պարտ է,*  
« *հարկ է,* եւ որ մեծն է՝ զմասնաւոր եղերս յնդ-  
« հանուրն շրջելով, եւ այլն : Վասն զի ընթե-  
« րակայ պաշտօնեայք գրողք կամ օրինակողք՝  
« մասնաւոր դիտումն ինչ ունելով, բազում ան-  
« գամ հանդիպի զի պաշտօնեայք քախանձեալ  
« յայոց կամ յանձանց՝ կարելոր դատեն զգրելն  
« ինչ կոնդակ կամ վճիռ . եւ ոչ գտեալ դիպօղ  
« ժամ, կամ վասն այոյ եկատման, ոչ հանեն  
« յատեան պապին զայն բան, այլ միայն զիմաստ  
« նորին եւ զգօրութիւն բանին ծանուցանեն նմին,  
« եւ զարտաքին հաւանութիւնն ընկալեալ՝ հրա-  
« տարակեն զայն յանուն քահանայապետին : Եւ  
« սակայն երբ անյաշող դիպին ելք իրացն, եւ  
« բնաւ իսկ անել զաանին, յետս կոչեն փու-  
« րով... Թող զայն զի երբեմն ետքա որք խոր-  
« հրրդական ժողովս առնեն, կոնդակս գրեն, եւ  
« քախանձանօք հաճեցուցեալ զպապն ի յանձնա-  
« ուրիւն՝ ասեն ի կոնդակին՝ քե այսպէս հաճոյ  
« րուցաւ քահանայապետին, կամ քե այս վճիռ  
« եղեւ առանձնական հաճութեամբ պապին :

« Արդ որովհետեւ ի ստիպելոյ սովորական  
« հարկին՝ ստեպ հանդիպին այսպիսի իրողու-  
« րիւնք, այլք եւս սովորեալ են քննել եւ զննել,  
« եւ առանց քննութեան չընդունել : Եւ երբ այլք  
« այսպէս վարին, Հայք զինչ ունիցին առնել,  
« որք ոչ քննելոյ միշոց ունին, եւ ոչ գհանգա-

« մանս իրացն զիտեն : Վասն որոյ եւ երբ հասցե  
« առ նոսա կոնդակ ինչ, ոչ ղնի ի գործ . մա-  
« նաւանդ զի տեսանեն՝ զի յայնմ կոնդակի ջկայ  
« ինչ նոր. որ ինչ յայլ ժամանակս պէսպէս պա-  
« հանջմունք (անտեղիք) լեալ են յազգէն ի վերայ  
« ինչ ինչ ծիսից եւ արարողութեանց, դարձեալ  
« նոյն բանք ի նոսին բովանդակին . եւ զի այն իրք  
« բազում անգամ քննեալ եւ փորձեալ են յառա-  
« ջին կարողիկոսաց եւ ի քազաւորաց Հայոց,  
« եւ ջնն յաշողեալ, եւս առաւել յայժմոյս ջյաշողի  
« ասելով, լուրեւամբ միայն յարգեն. եւ այս-  
« պիսի լուրեւամբ, որպէս եւ երբեմն պատաս-  
« խանատուութեամբ ի ձեռն միջնորդաց (որ  
« երանի քե անխարդախ հասաներ յարեւելից  
« մինչեւ յարեւմուտս) ծանուցանեն, եւ ծանու-  
« ցեալ իսկ են բազում անգամ՝ քե ջուեմք կա-  
« րողութիւն յայսպիսի իրս ձեռնամուխ լինելոյ :  
« Չորրորդ ընդդիմութիւնն այս է, զի ասեն՝ քե  
« Հայք ոչ բոլլ տան ումեք բողոքել կամ աղերս  
« ընծայել գրով եւ բանիւ առ սրբազան պապն :  
« Այդ քեպետ ըստ ինքեան սուտ է, բայց քե եւ  
« ճշմարիտ լինէր ըստ իմիք, ի ձեռն վերոյ գրե-  
« լոցս՝ բաւական պատճառ դորին քաջայայտ  
« լինի. այնու ամենայնիւ կայ եւ այլ հարկե-  
« ցուցիչ պատճառ՝ որ ոչն բողացուցանե առնել  
« զայդ յայժմու ժամանակի, յորում փոփոխեալ  
« է վիճակ իրաց եւ կառավարութեան : Այս ճշմա-  
« րիտ է, զի երբ պապն անձամբ անձին տեսաներ  
« զղատն, եւ ինքնին որոշէր, Հայք կամակար  
« մտօք համարձակ բողացուցանէին բողոքել ինչ,  
« մանաւանդ քե ազգն ողջոյն դիմէր առ նա՝  
« զանգատ ունելով զբաղերայից եւ այլն : Բայց  
« զարդիս, որպէս եւ յայտ է, ձեռք եւ մատուք  
« այոց խառնին ի նոյն : Երբ բողոքէ ոք, կամ  
« զիր աղերսանաց մատուցանէ առ սրբազան  
« պապն, եւս հրաման տայ՝ զի քանի մի կար-  
« դինայք հանդերձ աստուածաբանօք իւրեանց  
« քննութիւն արացեն ի վերայ իրացն, եւ ապա  
« յատեան իւր հանցեն : Այս յիրաւի բարեղեպ  
« իմն է. բայց այն աստուածաբանք տես զինչ  
« առնեն. հային քե այնց վերակացու կարդինա-  
« յաց միտք կամ հաճոյք յոր կողմն միտեն, եւ  
« ըստ նմին ջանան ուղղել զընթացս քննութեան,  
« ըստ այնմ պատճառս խուզեն, եւ ըստ այնմ  
« զկարծիս իւրեանց առաջի ղնեն կարդինալաց .  
« եւ նոքա իբրեւ ըստ վճոյ աստուածաբանից  
« կարգեն եւ որոշեն զբանն, եւ ըստայնմ որոշման  
« հաւանութիւն քախանձեն ի սրբազան պապն :

« Եւ սովորութիւն եւս չիք, եւ անմարք իսկ է  
 « լինել, զի բողոքիչն կամ աղերսարկուն տացե  
 « կարգել զայլ աստուածարանս ընդդէմ այնոցիկ  
 « աստուածարանից՝ զորոց կասկածի. եւ յոչ  
 « լինել այսր՝ այլ ազգ հանդիպին ելք իրացն,  
 « քէ ոչ յամենայնի՝ գէթ յոլովակի : Զայս քաջ  
 « զիտեն Հայք, եւ զփորձն իսկ առեալ են բազմօք  
 « ի ժամանակս Ռուբինեանց, զորս լաւ է լուելն .  
 « տեսեալ եւս են՝ զի այսպիսի անձինք պաշտօ-  
 « նեայք ճշմարտութեան, եւ քեւակից զործու-  
 « նեայք նոցա, առաւել ունկն դէնն չարախօսաց՝  
 « քան բարեխօսաց, զրպարտջաց քան իրաւա-  
 « խօսաց. սմին իրի եւ չառնեն իսկ բողոքումն  
 « ինչ. եւ չպարտաւորին եւս առնել, զի ոչ ժա-  
 « մանեն ի նպատակն . . .

« Յասացելոցս աստի դիւրաւ իմանան ընթեր-  
 « ցողք, զի ազգ մեր չունի ինչ ընդդիմութիւն առ  
 « սուրբ գահն առաքելական, այլ ընդունի զնա-  
 « խազահութիւն նորին (զառաջնութիւն գահին  
 « եւ ոչ զիշխանութիւնն ի վերայ իւր). բայց ար-  
 « տաքին ոսոխք մեր ջտեսեալ ըստ հաճոյս իւ-  
 « րեանց զնշան արտաքինս ի վերայ նոցա, պէս  
 « պէս չարախօսութիւնս յօղեն՝ քէ նօքա մերժեն  
 « զգահն : Որք զայսպիսիս խօսին՝ ոչ Հայոց ինչ  
 « ստնանեն, այլ անձանց իւրեանց վնասն, եւ  
 « անձամբ զանձինս պարտաւոր կացուցանեն  
 « յատենին Աստուծոյ եւ եկեղեցւոյ : »

Զամչեան վարդապետին այս խօսքերը մեջ  
 բերինք՝ ոչ քէ իրրեւ լուսաւորջական աստուա-  
 ծարանի կարծիք, — վասն զի երէ այնպէս ըլլար՝  
 բացէ ի բաց կընէրքեր պապերուն իրաւասութիւնը  
 ի վերայ ամենայն ազգաց քրիստոսապաւանից, —  
 հապա իբրեւ հոռովմեական հայ աստուածարանի,  
 որուն միտքն ու դիտումն է՝ միջնորդ միաբա-  
 նութեան ըլլալ երկուց եկեղեցեաց, բայց ջանալով  
 որ ազգային եկեղեցւոյն եւ առաջնորդաց իրա-  
 ւունքներն ու ազատութիւնները պահուին, եւ ոչ  
 քէ այժմու հոռովմեական հայ առաջնորդաց պէս  
 բոլորովին բախնանան : Փորձը եւ ժամանակը  
 բաւականեն այլ աւելի ցուցուց քէ Զամչեան Հօրն  
 եւ իր համախոնից ակնկալութիւնը կատարուելիք  
 չունի, այսինքն քէ Հոռովմայ արօն ու կարդի-  
 նալները քանի որ իրենց անիրաւ պահանջմանցը  
 վրայ ոչ միայն հաստատուն կեցած են, այլ եւ օր  
 ըստ օրէ պահանջմունքնին կաւելցրեն, այլ եւ  
 այլ եկեղեցեաց իրարու հետ միարանիլը կարելի  
 չէ. մանաւանդ քէ կըվախցուի որ նոյն իսկ կա-  
 բոյիկ ազգաց եկեղեցիները՝ ինչպէս որ նոյն պատ-

ճառաւ հետ զնետէ բաժնուեր են հոռովմեականէն,  
 այսուհետեւ այ բաժնուին ու բաժնուին :

Անա Գաղղիան օրինակ է առջեւնիս : Թեպէտ  
 եւ ընդհանրապէս բոլոր ազգը կամողիկ կըսուի,  
 բայց իրօք երկու մաս բաժնուած է՝ ըստ եկեղե-  
 ցական կարծեաց եւ իրաւանց : Մէկ մասը կը-  
 սուի զաղղիական (gallicane) կամ ազգային, մեկալը  
 հոռովմեական կամ անդրլեւնական (ultramontaine) :  
 Որչափ զիտուն եւ քաջ աստուածարաններ որ  
 կան՝ առաջին մասին մեջ են, եւ սրջափ որ տգետ,  
 միամիտ կամ շողոքորթ եկեղեցականներ ու աշ-  
 խարհականներ կան՝ երկրորդ մասին մեջ են :  
 Մօտ տարիներս այլ եւ այլ պատճառներով (որ  
 հոս զնելը աւելորդ է) անդրլեւնականաց սկզբ-  
 բունքները շատ տարածուեցան զաղղիացի եկե-  
 ղեցականաց մեջ. եւ գլխաւոր տարածողներէն  
 մէկն եղաւ Յովսէփ տը Մէրք անունով մոլեմա-  
 խանձ մատենագիրը, որ Պապ անունով զիրք մը  
 ունի՝ այս նիւքիս վրայ ամեն տեսակ մոլորական  
 վարդապետութեամբ լեցուն. այնպէս որ զաղ-  
 ղիացի աստուածարաններէն մեկը հառաջելով մը  
 կըգրէ քէ « Այսօրուան օրս սուտ նախանձայու-  
 « զութեամբ մը մոլորեալ մարդիկ կան որ մեր  
 « եկեղեցւոյն ազատութեան վառաւոր շորան  
 « կտրել կուզեն : Թէ որ անոնց խօսքին նայինք,  
 « Գաղղիան հազիւ թէ ուղղափառ է. Գաղղիոյ  
 « եկեղեցւոյն գերահոջակ վարդապետաց խօս-  
 « քերը կասկածելի եղեր են. Հոռովմայ չափա-  
 « զանց պահանջմունքներուն դէմ կենալը՝ առա-  
 « քելական արձոնն ապատամբելու պէս բան մը  
 « դարձեր է : »

Արդ երէ Գաղղիացիք այսպէս զանգատելու  
 իրաւունք ունին, հապա մերագնեայք ինչ պիտի  
 ըսեն՝ երբ կըտեսնեն որ իրենց մեջ կան այնպիսի  
 մարդիկ որ Խալիոյ աստուածարաններէն աւելի  
 ջերմեռանդ են, եւ գրեթէ պապեն աւելի կարօյի-  
 կութիւն կըմախեն : Ո՞ր կըմնան Բելարմինոսի  
 պէս հոռովմեականներն որ պապը անսխալ է կը-  
 սին, անկից անդին չէին անցներ. մերօնք, հայ  
 ծնած ու մկրտուած անձինք, իրարու հետ վիճելու  
 ատեն՝ մէկն որ հարցրնէ տաք տաք քէ « Միքի  
 պապը Աստուան է, » պատասխան կուտայ դի-  
 մացիներ՝ ձայնը աւելի բարձրացրնելով ու աշուր-  
 ները պատատելով. « Աստուած չէ եւ հապա ինչ  
 է . . . » Զրսեն բարեմիտները, կամ զբարեմիտս  
 խարել ուզողները, քէ ատոնք ուսմկաց եւ տգի-  
 տաց խօսքեր են : Թող բանան լատին եւ  
 իտալացի աստուածարանից զրքեր, կըտեսնեն

որ իրացրնէ Աստուծոյ հաւասար իշխանութիւն եւ պատիւ տուողներ խիստ շատ կան պապերուն : Միայն Գաղղիոյ մէջ է որ դեռ կը գտնուին այնպիսի քաջ աստուածաբաններ որ աներկիւղ համարձակութեամբ իրենց ազգային եկեղեցւոյն, եւ անով ընդհանրական սուրբ եկեղեցւոյ իրաւունքները կը պաշտպանեն ընդդէմ պապականաց :

Եւ երբ ասուք — որ սրբափ ալ ինքնիշխան ըսեն իրենց եկեղեցին՝ զն կրնար ժխտել թէ իբրև մասն արեւմտեան եկեղեցւոյ՝ Հռովմայ պատրիարքական արքային հպատակ պիտի ըլլան՝ զոնք գլխաւոր խնդիրներու մէջ, — այսպէս կը խօսին, — հապա ինչ ըսելու է մեր Հայաստանեայց եկեղեցւոյ որդւոցը որ ոչ երբեք պապերուն իշ-

խանութեան տակը մտած են ազգովիմբ, ոչ Արշակունեաց, ոչ Բագրատունեաց, ոչ Ռուբինեանց ատենը, եւ ոչ իսկ բագաւորութեան բոլորովին վերցուելէն եւ ազգին դէպ ի աշխարհիս ամեն կողմը ցրուելէն ետքը :

Այս համառօտ բացատրութիւնը յուսանք թէ բաւական սեպուի առ այժմ այն մեր Վերադարձի պատմութեանը մէջ ըսած խօսքին : Երբ եւրոպոյն ծանրութեանը նայելով՝ այնպէս երեսնայ ոմանց որ իբր թէ ուրիշ ոճով պէտք էր խօսիլ վրան, կը յիշեցընենք անոնց որ օրագիր է կարդացածնին, յորում աստուածաբանական ոճի ճշգրտութիւն չկրնար պահանջուիլ :

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ

(Շարայարութիւն 1 :)

ԾՈՒԻ ԵՒ ՄՈՒՐ

Լոյս տալու համար վառած կազը ինչ բան է :

— Լուսաւորութեան համար վառուած կազը կրկնածուիս ջրածին կը ստի :

Կրկնածուիս ջրածին կազն ինչ է :

— Այն կազն է որ իւղային նիւթերէն կելլէ, երբ զանոնք սաստիկ կը ակով լուծես, եւ լուսաւորութեան կազին փայլուն եւ պայծառ մասն է :

Չուտ ջրածինը օդուն հետ խառնուելով՝ այնպիսի բոց մը կը հանէ որ լոյսը քիչ՝ բայց տաքութիւնը շատ կը ըլլայ :

Ածխուտ ջրածինը կը ձևանայ գործարանաւոր նիւթոց բնական կերպով անդադար լուծուելէն, եւ կը ակով բորուելէն : Ասոր լոյսը զեղնագոյն ու տկար է :

Կրկնածուիս ջրածինը իւղային նիւթերուն բորուելովը կը շինուի. ասոր լոյսը շատ ձերմակ ու պայծառ է :

Կրկնածուիս ջրածին կազին այնչափ լուսաւոր ու պայծառ ըլլայ ինչէն է :

— Վասն զի անոր բոցին մեջտեղը ամենամանր ածուիս կը ընտի որ շուտ մը կը բորբոքի :

Ինչէն է որ վառած կազին վարի կտորը մընագոյն կապոյտ է :

— Վասն զի ետեւէ ետեւ եկող բարձ կազին ընթացքովը բոցին այն կտորը կը պաղի, եւ տաքութիւնը բաւական չըլլար կազը լուծելու եւ անոր մեջի ածխիկը այրելու համար :

Ինչէն է որ անելի դիւրաւ կը մարի կազը անցքին կէս մը գոց եղած ատենը քան թէ խողովակին բոլորովին բաց եղած ատենը :

— Վասն զի պզտիկ բոցի մը մէջ այնչափ շատ կազ չգրտուի որչափ որ կը գտնուի բոլոր խողովակին բերնին լայնքովը ելած բոցոյն մէջ :

Ամեն անգամ վառելիքը որչափ որ շատ է՝ կազին լոյսն ալ այնչափ սաստիկ կը ըլլայ :

— Ոչ. կազին լուսոյն սաստիկ կամ նուազ ըլլալուն մեծ պատճառ են կազարեբանին ձեւը, օդի ընթացքին արագութիւնը, բոցոյն երկայնութիւնն ու ձեւը :

Վազարեբանը՝ այսինքն կազին դուրս ելլելու ծակը խիստ պզտիկ պիտի ըլլայ, 55 հազարամեր սրամագձով, բոցն ալ երկայն :

Շիջուցիկով ինչո՞ւ կը մարի ճրագը :

— Վասն զի բոցը շիջուցիկին մէջ գտնուած օդը շուտ մը կը հատցընէ, անով բրուածին չուսնեար ու կը մարի :

Ինչէն է որ երբ բոցի կտոր մը առնուս ու շիջուցիկի ձեւով պլլես եւ անով ճրագը մարես, բո՞ղբը բոցէն չբորնկիր :

— Վասն զի նախ՝ բոցի շիջուցիկին մէջ եղած բրուածինը շուտ մը բոցէն կայրի կը հատնի :

Երկրորդ, բոցը բոցին ներսի կողմը ածխային բրուով կը պատէ, անով չբողուր որ բորնկի :

Ի՞նչ է պատճառն որ ճրագին երկընցած քիբը վար կը ընդի :

— Իր բնական ծանրութիւնը :

ճրագին երկընցած քիբն ծայրը մոխիր կը կապէ. պատճառն ինչ է :

— Այն է որ բամպակին ածխացեայ մասունքը պատրուակն բոլորովին չզատուելով՝ իրարու վրայ կը դիպուին, եւ պատրուակն ծայրէն բերեւ կերպով մը կը կախուին :

Ինչէն է որ բամպակէ պատրուակն ծայրը բոցէն չայրիբ չբորնկիր :

\* Տես Թիւ Ժ, էջ 259 :

— Վասն զի պատրուզին երկայնութենէն ու բանձրութենէն բոցոյն տաքութիւնը այնչափ կը պակսի որ ածխացեալ մասունքն ալ նատրցնելու համար բաւական տաքութիւն չմնար :

Ինչէն է որ հարկ կըլլայ ստեպ ստեպ հասարակ ճրագներուն քիբը առնել :

— Վասն զի քրին շորս դին բոց պատած է, եւ շորդուր որ օդուն քրուածիւնը անոր հասնի ու բամպակը այրէ :

Ինչէն է որ մոմին ու ճարպամոմին քրերը առնելու հարկ չըլլար :

— Վասն զի պատրոյզը ուրորուն ըլլալով, քանի որ մոմը այրի ուրբը կը քակուի, ու բերել կերպով մը դեպ ի վար կը ծռուի, այնպէս որ ծայրը կերբայ բոցին դրսի կոնածեւին մէջ կայրի :

\* Պատրուզին ուրորուն ըլլալը բաւական չէ. վասն զի իւրային բրտին մէջ եղած կիբը կընայ պատրուզին մէջ լեցուիլ ու անոր ծծողական գորութիւնը պակսեցընել : Ուստի պեաք է պատրոյզը բորակային բրտի շրին մէջ խոբել, այն բրտն կրին նետ միանալով՝ բորկակ մը կըլլայ որ պատրուզին մէջ կըմնայ ու դիւրանալ փայլուն նիւր մը կըղառնայ, եւ պատրուզին բոլորովին այրելէն ետեւ՝ անոր ծայրը կերեւնայ :

Ի՞նչ է պատճառն որ երբ մոմին մարմրուկ լոյսը սաստկացընելու ուզեն՝ պատրուզին ծայրը քիջ մը կը ծռուեն :

— Վասն զի պատրոյզն որ առաջ ուղղահայեաց եր՝ այնպէսով բոցոյն դրսի կոնածեւին մէջ կըմտնէ, ուր որ ածխիկը կըբամնուի ու կըբորբոքի :

Հասարակ ճրագին պատրոյզը ինչո՞ւ համար ուրորուն չէ :

— Վասն զի ուրորուն ըլլար նէ՝ ծռած քրին տաքութենէն շուտ մը կը հնալէր այն կողմի ճարպը, եւ ճրագը կը վազեր :

Ինչէն է որ կարմիր պատրուզին տաքութենէն մոմը չվազեր :

— Վասն զի մոմը եւ ճարպամոմը հասարակ ճարպին պէս ցած աստիճանի ջերմութեամբ չեն հալիր :

\* Ծարպը կը հալի հարկւրամասն ջերմաչափին 38 աստիճանի տաքութեամբը.

ճարպամոմը 62 ին. .

Մոմերն ընդհանրապէս 64 ին կը հալին :

Հասարակ ճրագն որ փչելով մարես՝ պատրոյզը զարշելի հոտ մը կը հանէ. ասոր պատճառն ինչ է :

— Պատրուզին տաք ճարպէն ելած բուջական զարշանոտ եղն է, որ յունական բառով *լուպուլիթ* (*acryle = άκρα - ύλη*) ըստած է :

Փոսն մը մէջ բափուած ու այրած ճարպին զարշելի հոտ հանելուն պատճառն ինչ է :

— Քուջական եղն է որ իր հանած շոգիովը մարդուս աչքը կը նեղէ ու շնչառութեան գործարանին մէջ բորբոքումն կը պատճառէ :

Տապկոցին գէջ հոտ հանելուն պատճառն ինչ է :

— Այն բուջական եղն է որ *լուպուլիթ* (*acroléine*) ըստած է :

Խոնակերոցին մէջ խորովածին ու տապկոցին կիւելէն ետեւ մնացած գէջ հոտը ինչէն է :

— Երբոր մսին եղերը դեռ եփ ելլելու վրայ են, օդ առնելու ատեն կը քակուին ու իւրապէս ըստած բուջական եղը կը հանեն :

Ընդհանրապէս տաքութիւնը ինչ տեսակ նիւրական փոփոխութենէն բուստածու կըլլայ :

— Տաքացումն նիւրոյն ընդարձակութիւն կուտայ :

Ի՞նչպէս կը ցուցնեն թէ ջերմութեամբ օդոյն զանգուածը կը հարձակի :

— Թէ որ փամբշտին մէկ մասը օդով լեցընես, բերանը կապես ու կրակի առջեւ դնես, մեջի օդը այնչափ կը ճարձակի որ զփամբուշտը կը ճարձեցընէ :

Ինչէն է որ փամբուշտը կրակի մօտ որ դրուի՝ մեջի օդը կընդարձակի :

— Վասն զի կրակին տաքութենէն օդոյն մասնիկներն իրարմէ կը զատուին, անով առաջ որչափ տեղ որ բռնած էին՝ անկեց ատելի տեղ կը բռնեն :

Ինչէն է որ ջնեղքուած շագանակը երբոր տաք մոխրի մէջ եփես՝ սաստիկ ձայն հանելով կը ճարի :

— Վասն զի մէջը շատ օդ կայ. այն օդը տաքութեամբ կընդարձակի, եւ դուրս ելլելու տեղ չգտնելով՝ վրայի պինդ փոճկը կը ճարեցընէ :

Շագանակին սաստիկ ձայնով ճարելուն պատճառն ինչ է :

— Նախ փոճկին յանկարծակի ճեղքուիլը ինչպէս որ փայտ մը կամ ապակի մը կտորած ատենդ ալ ձայն կը հնանեն :

Երկրորդ, օդը շագանակէն ելած ատենը ձայն կը հնանէ, ինչպէս որ վառօդն ալ հրացանէն ելած ատենը :

Փոճկին ճարելովը կամ փայտին կտորելովը ինչո՞ւ համար ձայն կըլլէ :

— Վասն զի երբոր յարակցութեան ձգողութիւնը յանկարծակի կը քակուի, օդը սաստիկ ուժով մը կը քցուի. այն ցրեցմունքէն օդուն մէջ շուտ շուտ ծածանմունքներ կըլլան որ մարդուս ականջին զարնելով՝ ձայն կը հնչեցընեն :

Օդը շագանակէն ելած ատենն ինչո՞ւ ճարելու ձայն կը հնանէ :

— Վասն զի շագանակին մէջ զոցուած օդոյն յանկարծակի բնդարձակուիլը՝ մընտրութիւն մէջ քիջ մը տեղ դատարկութիւն կը զատուի : Շագանակին ճարելուն պատճառ՝ օդոյն աս այլապիլն ու նորէն յանկարծ իր առջի զուգակշիռ փնձակին դատնայն է :

Ինչէն է որ պալքուցիկը (*լիպուլիթ*) սաստիկ ձայն կը հնանէ երբ մէջէն խոնոճ գետակը դուրս նետուի :

— Վասն զի խոնոճին ու կորին մէջտեղը ճնշուած օդը յանկարծակի դուրս կըլլէ խողովակէն, եւ շորս դին պատած օդուն զարնուելով՝ ձայն կը հնանէ, — ինչպէս որ ձեռքդ սեղանին ալ զարնես՝ կը հնչէ :

Ինչէն է որ շագանակը առաջուց ճեղքուած ըլլայ նէ՝ ջճաբիլ :

— Վասն զի տաքցած օդը փոճկին ճեղքէն դուրս կըլլէ :

Ինչէն է որ խնձորը կրակի մօտ որ դնես՝ կը պայրի ու կը պորոքայ :

— Նախ՝ կես մը մեջի օդոյն տաքութեամբ բնդարձակուելէն. երկրորդ, մանաւանդ անոր համար որ խնձորին հիւրը շոգի կը զարնայ :

Խնձորին հիւրը կամ շուրթ ինչ կերպով կը ցած է անոր կեղեւին մէջ :

— Այն հիւրը շատ մը մանրիկ ծակերու մէջ է՝ բջիջի ծակերուն նման : Երբոր հիւրը շոգի գառնայ՝ այն ծակերէն դուրս կը նետուի, եւ իրեն գեճ կը ցուց մասերը կը ծրկէ՝ կեղեւէն դուրս կը հնանէ :

Խնձորը կրակին մօտ որ դնես, ինչէն է որ անոր մէկ կտորը կը կակրուայ, ու բոլոր մէկայ կողմերը առջիկին պէս պինդ կըմնան :

— Վասն զի տաքցած հիւրին շոգիովը՝ կրակին կողմը դարձած կտորին բուսական հիւրը կեփի. անով մանրիկ ծակերը կը ճարին, օդն ու շոգին դուրս կըլլեն, շատ մը հիւր դուրս կը բախի, — ուստի հարկաւ խնձորն ալ կը կակրուայ ու կը բորոյնայ :

Ինչէն է որ կրակին մէջ ձգուած փայտերէն երբեմն շատ մը կայծեր կելլեն ճարճատելով :

— Վասն զի նախ՝ տաքութեամբ ընդարձակուած օդը փայտին ծակտիքէն դուրս կըցատքէ, եւ միանգամայն ծակերուն ընդերքէն ինչ արգելքներ որ կային՝ զանոնք կընետէ : Երկրորդ, այս երևուիս մէկ պատճառն ալ ան է որ փայտին մէջի փայտային մանրաջղերը դիւրավառ կազ կը դառնան :

Փայտի ծակտիքը բւելով ինչ կիմացուի :

— Փայտին ծակտիքը՝ այն աչքի շտեմուած ճեղքերն են որ հիւրը անոնց մէջէն կըտարածուի բոլոր ծառին մէջ :

Կրակի մէջ դրուած փայտէն ելող կարմիր կայծերն ինչ են :

— Փայտին կրակ դարձած մանրիկ մասուներն են որ օդոյն տաքնալովը փայտին ծակտիքէն դուրս կըցատքեն :

Ինչէն է որ մայր (շամ) փայտի կտորը ուրիշ փայտերէն աւելի կըճարճատի ու կայծեր կըճանէ :

— Վասն զի մայր փայտին ծակտիքը աւելի խոշոր են, եւ ուրիշ պիտի փայտերուն ծակտիքէն աւելի օդ ունին մէջերնին :

Ինչէն է որ դաշար փայտը չոր փայտին չափ ոչ կըճարճատի եւ ոչ կայծեր կըճանէ :

— Վասն զի դաշար փայտին ծակտիքը հիւրով լեցուցու են . ուստի չոր փայտին ծակտիքներուն չափ օդ չեն ունենար :

Ինչէն է որ չոր փայտը աւելի կըճարճատի եւ աւելի շատ կայծեր կըճանէ քան թէ դաշար փայտը :

— Վասն զի անոր հիւրը ցամքած, եւ տեղը օդով լեցուած է :

Ինչէն է որ չոր փայտը աւելի դիւրաւ կըվառի քան թէ դաշար կամ բաց փայտը :

— Վասն զի չոր փայտին ծակտիքը օդով լեցուցու են, եւ օդը անոր վառելուն պատճառ կըլլայ. անոր ներձակ, դաշար կամ բաց փայտին ծակտիքը խոնաւութեամբ լեցուցու են, ուստի կրակն ալ կըմարի :

Ինչո՞ն համար կրակը խոնաւութեամբ կըմարի :

— Վասն զի նախ՝ խոնաւութիւնը չբոլոր որ վառելիքներուն ածխինն ու ջրածինը օդոյն բրուածնին նեա միանան ու ածխային բրուան եւ ջուրը կազմեն .

Երկրորդ, ջուրը շոգի դառնալով՝ վառած նիւթերուն տաքութիւնը անդադար կառնու կրտանի :

Ինչէն է որ կրակէն տաքցած քարերը կըճարճարուին ու կը կտորտին տան մէջ :

— Վասն զի նախ՝ քարերուն կազմուածքը խիտ ըլլալով՝ բոլոր ջիւտար որ տաքցած օդը դուրս ելլէ . անիկայ ալ ուժով կը մղէ, կըկտորտէ զանոնք, եւ կտորները սենեկին մէջ կըցրուէ :

Երկրորդ, կրակին տաքութեամբը բիւրեղացման ջուրը դուրս կելլէ :

Տները տաք օդով տաքցրելուն կերպը որն է :

— Տանը տակի մըրքանցիլն մէջ կրակ կըվառուի, այն տեղի օդն ալ օդալից սենեկին նեա հաղորդակցութիւն ունենալով՝ վեր կըբարձրանայ եւ վերի օդը կըտաքցրնէ :

Օդալից սենեակն ինչ է :

— Աղիւսէ պատերով փակու չորս դիւն պատած տեղ մըն է . նոն դրսի պաղ օդը կըբոլոր կըտաքանայ ու վերամբարձ (այսինքն վեր ելլող) տաք օդուն տեղը կըբուէ : — Պաղ օդը կըմառնէ այն խողովակներէն կամ շնչանաններէն որ աղիւսակերտ պատին վարի կողմը շինուած կըլլան :

Երբոր տղան բլրէ գունտ մը կըշինէ ու տակը զրուած

զինիլ ոգիբով բրջուած սպունգին կրակ կուտայ, ինչո՞ն համար գունտը կուռի :

— Վասն զի գնտին օդը բոցէն կընդարձակի, մինչեւ որ ամեն կողմն ալ ուռի ու բուռըր լաւ մը ձիգնայ :

Օդապարիկը ինչո՞ն վեր կելլէ :

— Վասն զի օդոյն զանգուածը տաքութեամբ եռապատիկ ու քառապատիկ կաւելնայ. ուստի այնչափ կըբերենայ որ բուռըր՝ բամպակը՝ սպունգը եւ անոնց նման բաները որքա՜ն ալ ծանրութիւն ունենան, բոլորը մէկէն դարձեալ աւելի բերեւ կըլլան քան թէ մընուորտին օդը :

\* Օդապարիկը նոյն կերպով օդուն մէջ կըվեճայ՝ վարեն եկող պաղ օդին ճնշմամբը՝ ինչ կըբազմ որ ծուխը կըմղէ դեպի վառարանին ձխանը :

Ինչէն է որ երբ սպակիկ ամանի մը բերանը սպակիկ խից մը խորես բաց բաց, սովորաբար դժուար կըլլայ այն խիցը հանելը :

— Վասն զի այն ատեն շիշին բերենէ ներս օդ չկընար անցնիլ . ուստի երբոր շիշը տաք սենեկի մը մէջ եղած ատենը գոցուած է, շիշին մէջի օդը աւելի խտանալուն պէս՝ դրսի օդոյն ծանրութիւնը խիցին վրայ կըճնշէ ու անշարժ կըբուսէ զանիկայ :

Ինչէն է որ հոտաւտ եղերու շիշին սպակիկ խիցը շատ անգամ շիշին բերնին ուժով փակած կըլլայ :

— Վասն զի նախ՝ սովորաբար հոտաւտ նիւթերու շիշերը քեատրոններու եւ տաք դանդիններու մէջ կըգործածուին . անոնց մէջի օդն ու բռչական գոյացութիւնը նորէն խտանալուն պէս՝ դրսի օդոյն ծանրութիւնը խիցին վրայ կըճնշէ ու չբոլոր որ դիւրաւ բացուի :

Երկրորդ, շիշին մէջի գոյացութիւնը սաստիկ բռչական ըլլալով, թէ խիցը եւ թէ շիշին բերանը խոնաւ կըլաւնէ :

Հաստատուն, հոտաւտ եւ կազային մարմիններուն մէջ որոնք աւելի կընդարձակին տաքութեամբ :

— Կագերը, որ նոյն ճնշման տակ որ դրոսին՝ հաւասարապէս ու միակերպ կընդարձակին :

\* Մընուորտին օդը եւ ամենայն կազ՝ ջերմաչափին ամեն մէկ աստիճանին՝ 267 Ին 4 կընդարձակի :

Օդոյն եւ բոլոր կագերուն խտութիւնը իրենց ջերմութեան աստիճանին նեա ինչ յարաբերութիւն ունի :

— Կագերը որքա՜ն քիչ խիտ ըլլան, իրենց տաքութիւնը այնչափ աւելի կըլլայ. — օրինակի համար, օդոյն խտութիւնը կիսով չափ կըպակի՝ երբոր տաքութեամբ իր զանգուածը կըլին ըլլայ :

Ի՞նչ է վառօդը :

— Խառնուրդ մըն է գուտ աղբորակի, ծծմբի եւ բերեւ ու քիչ այրած ածուխի :

\* Այս երեք նիւթոց համեմատական չափերը ամեն երկիր ու ամեն բանի համար նոյնպէս չեն . գոր օրինակ,

Բարակ.	Ածուխ.	Ծծումբ.	
Որսի վառօդ (Գաղղիացոց) . . . .	78	42	40
Պատերազմի . . . . .	75	42 1/2	42 1/2
Ականի . . . . .	65	45	20
Անդղիացի վառօդ . . . . .	76	45	9

Ածուխն ու բորակը պէտք եղած կազը կուտան, ծծումբն ալ զերակը կըսաստկացրնէ :



Ինչն համար վառօղբ հատիկ հատիկ է :

— Վասն զի այն հատիկները երբոր բորնկին՝ անոնց բոցը գանգոսածին ծակերուն մեջ մտնելով՝ խիստ քիչ ժամանակի մեջ գենքին պարպուկուն պատճառ կըլլայ . քե որ վառօղբ միակրտուր եւ կամ փոշիի պէս ըլլար՝ այս բանս չէր կրնար ընել :

Վառօղին բնդմունք հանելուն պատճառն ինչ է :

— Նախ՝ վառօղին մեջի նիւրբրուն հաստատուն վիճակ կազային վիճակ անցնիլը .

Երկրորդ՝ վառօղին հանած գանազան կազերուն յանկարծակի ընդարձակիլը :

Վառօղին հանած հոտոյն պատճառն ինչ է :

— Ածխիկի ծծմբակն է :

Հրագենքին պարպուկուն ետեւ՝ մեջը մնացած հաստատուն մրտարը ինչ բան է :

— Այն մնացորդը փորասիւնի ծծմբակ է :

Ինչէն է որ վառօղբ կրնայ երկաթէ գունտեր եւ ուրիշ ծանր նիւրբր նեոս նետել :

— Վասն զի կազային նիւրբրը յանկարծակի ընդարձակուելով՝ գնտակներուն եւ վիրգերուն վրայ այնպիսի ճնշում մը կընեն որ անագին ուժով դուրս կընետան գանոնք :

Որոնք են այն կազերն որ վառօղին այրելովը կըձևանան եւ նրագենքին նետուելուն կօցենն :

— Ածխային բրուն ու բորակածին կազը . անոնցմէ գատալ՝ հաստատուն գոյացութիւն մը որ փորասիւնի ծծմբակ կըսուի :

Ինչէն է որ վառօղբ կրնայ մեծամեծ քարեր ճարեցընել ու նեոս նետել :

— Վասն զի վառօղին բորնկիլը նեղ ու պզտիկ տեղի մը մեջ պատանելով, կազերն որ ընդարձակին՝ սաստիկ ճնշում կընեն դեպ ի ջրու դին, ու սոսկալի ուժով ամեն բան կըճարեցընեն :

Ինչն համար զենքը շատ անգամ վառօղին ուժէն կըկտորտի :

— Վասն զի վառօղին զենքին մեջ տուած ոյժը այնչափ սաստիկ ու յանկարծական է որ երկրբին կամ պղնձին կարծրութիւնը անոր դէմ չեն կրնար դիմանայ :

Չինու ճայքիկ բտուած խաղալիքը ինչով կըշինուի :

— Արծրբի շանրակով : — Այս փոշին քիչ մը կառնեն, քանի մը հատիկ ծեծած ազակիլի կամ աւազի հետ կըխառնեն, ու մազադարի երկու հատ նեղ երթի գետով իրարու հետ կըփակցընեն :

Ինչէն է որ Չինու ճայքիկը երբոր դեպ ի ներհակ կողմը քաշես՝ ճարելու ճայն կընանն :

— Վասն զի ազակիին կամ աւազին հատիկները շանրակի փոշիին հետ շփուելուն պէս՝ հարկ է որ բորնկի ու ճարելու ճայն հանն :

Քոյրէ եւ ուրիշ նիւրբրէ շինուած շանրիկները ինչպէս են :

— Անոնք ալ Չինու ճայքիկներուն պէս կըշինուին : Այս խաղալիքները երբոր ուժով գետինը գարնես, կամ ոտքով կոխես վրանին, ճարելու ճայն կընանն :

Երբոր կէս ֆրանքնոց արծարը 45 կրամ բորակային բրուի մեջ լուծես, ու այն ջուրը 60 կրամ օդով տաքցընես, արծրբի շանրակ կըշինուի :

ԱՌԱՎ

ԱՂԱԻՆՍ ԵՒ ԱՂՈՍԻ :

Պանրի կըտոր մը բբուցած՝ ագոստին մէկն ի կըտուցին Մատի մը վըրայ իջաւ բառեցաւ .

Պանրին հոտէն աղուխտուն բէրնին ջըրէրը վազեցին .

Վամաց կամաց գընաց ծառին մօտեցաւ . [քիկ-բարի տեսանք, բարի տեսանք, ըսաւ, ագոստ աղբա-Ատ ինչ տեսք, ինչ փետուրներ, ինչպիսի գոյն գեղե-Իբաւ կըսեմ, քե որ ճայնիկղ այ նըման [քիկ-Ըյայ տեսրիղ փետուրներուդ աննըման,

Դուն այս անտառին անգիւտ փիւնիկն ես,

Քրոջնոց էրամին դու մէկհատիկն ես :

Խընտուամէն ագոստուկին կարծես քե խէյրը բըռաւ .

Չայնիս սպուտութիւնը ցուցընեմ սըւոր ըսաւ .

Կըտուցը լաւ մը բացաւ չըբացաւ,

Պանրին կըտորը ցատքեց վար ընկաւ :

Աղուտան առաւ լափեց պանիրն անուշիկ .

Գընա սովիք ըսաւ, այ խեղճ ագոստիկ .

Շողորոքը մարդուն հացը նա կուտայ .

Որ անոր խօսքին քեզի պէս կուտայ .

Այս խըրատըս քիչ մը պանիր չէր արծեր : Ագոստը խաղը ու խայտառակ, մընացեր . Երդուընցաւ որ այ չըխաբուի, բայց ուշ էր :


ԼԱՅՈՒՆԻՆ :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ք Ա Շ Խ Ա Ր Հ Ի

ՀՈՂՈՍ ԿՂԶԻ ԵՆ ՔԱՂԱՔ.

Սևասթոփոլի պաշարումն ու առնուիլը՝ ակեց գրեթե տարի մը առաջ՝ ճին պատմութեանց սէր ունեցողներուն միտքը կրճգէր ըստ իմիք Հոողոսին 300 տարի առաջ պաշարուիլն ու առումը սոսկալի դժուարութիւններով ու անբիւ մարդկանց կոտորածով : Այն ցաւալի յիշատակը նորոգուեցաւ այս տարի՝ նոյեմբեր ամսոյս սկիզբները պատահած զարհուրելի փորձանքէն, որով

Հոողոսի մեջ գրեթե 200 տուն կործանեցաւ, ու հազար հոգւոյ ջափ յանկարծակի բաղուեցան անոնց աւերակներուն տակը : Արդէն լրագիրները մանրամասն տեղեկութիւն տուին այն փորձանքին վրայ, եւ հասկըցուցին թէ ինչպէս փորորկի առնն կայծակ իջեր է Հոողոսի Սուրբ Յովնանէն եկեղեցւոյն վրայ, ու անոր տակը հարիւրաւոր տարիներէ ի վեր պահուած վառօդը բորեկցուցեր



Հոողոս Բազար :

է. որով քաղաքին մեկ մասն ալ տակնուվրայ եղեր է աղետալի կերպով : Հոողոս կղզին ճին ատենը շատ անուանի է եղեր բնակիչներուն հարստութեանն ու քաղաքակրթութեանը համար. երկար ժամանակ ալ

Յունաստանի կղզիներուն մեջ իրենց ինքնիշխանութիւնը պահեր էին Հոողացիք՝ միաբանասիրութեամբ, ու իրենց իմաստուն օրինացը զգուշաւոր պահպանութեամբ : Մեջի գլխաւոր քաղաքը, որ նոյնպէս Հոողոս կըսուի, շինուած է

հին մայրաքաղաքին աւերակներուն մօտ որ Քրիստոսէ 222 տարի առաջ գետնաշարժէ կործաներ է. այն ատեն վար ընկեր է նաեւ այն հոջակաւոր Կողոնը կամ Ապողոնին պղնձէ սոսկավիթխար արձանը որ Քրիստոսէ գրեթէ հազար տարի առաջ կանգնուած էր, եւ աշխարհիս եօրը հրաշալեաց մեկը կըսեպուէր :

Ուորիոս կայսեր ատենը Պարսիկք տիրեցին Հոողոսի, յետոյ Արաքացիք, այնուհետեւ Յոյնք. 1205ին Վենետկեցիք առին, անոնցմէ անցաւ դարձեալ Յունաց ձեռքը, եւ յետոյ Տաճկաց :

Միշին դարու ժամանակները, այսինքն 1504ին, 1508ին ու 1519ին, խաչակիր ասպետներուն մեկմասը Հոողոս քաղուեցան արեւելքէն, ու երկու հարիւր տարիէն աւելի հոն բնակեցան՝ Օսմանեանց դէմ իրենց երկիրը պաշտպանելով : Բայց Գանունի սուլդան Սիւլէյմանը քաղաւորելուն պէս՝ մեծ պատրաստութեամբ, այսինքն երկու հարիւր հազար զօրքով ու չորս հարիւր կտոր նաւով գնաց քաղաքը պաշարեց : Մեշի ասպետները վեց հարիւր հոգիէն աւելի չէին, եւ դրսէն օգնութեան ամենեւին յոյս չունէին. միայն Կրետացիներէն հինգ հարիւր հոգի եկան իրենց օգնական. բայց ասպետաց մեծ մագիստրոսը՝ քաջն Վիլլիէ տը Լիւստան՝ վեց ամիս ղիմացաւ այն սաստիկ պաշարման : Հարիւր քսան հազար քնդանօրէն աւելի նետեցին Օսմանեանք քաղաքին վրայ, եւ քառասուն հազար մարդ կորսընցուցին իրենցմէ. ոմանք կըսեն 180 հազար. եւ սակայն բերես կըյուսահատէին ու պաշարումը կըվերցընէին՝ թէ որ ներսի ասպետներուն մէջ անմիաբանութիւն չիլնար, ու Անդրեաս Ամարայ անունով գլխաւոր ասպետներէն մեկը դաւաճանութիւն չըներ. որով սուլդան Սիւլէյման այ աւելի սիրտ առաւ, եւ պաշարումն ու պատերազմը առաջ տարաւ : Քաղաքը աւերակ դարձաւ, ասպետները շարդուեցան

մեռան, ողջ մնացողներն այ սչ վառօղ ունէին եւ ոչ ապրուստ. պէտք եղաւ որ անձնատուր ըլլան :

Սուլդան Սիւլէյման մտաւ քաղաքը 1522ին դեկտեմբերի 25ին, որ տօն էր ծննդեանն Քրիստոսի ըստ Լատինացոց; եւ ողջ մնացած ասպետները՝ իրենց քաջութեանը համար աւելի յաղթական սեպուելով քան թէ յաղթուած՝ նախ Կրետէ քաղուեցան, եւ յետոյ Մալթա կղզին, ուր նորէն հաստատեցին իրենց ասպետական կարգը :

Հիմակուան Հոողոսը հին ատենի բարեբերութեանն ու երջանկութեանը նայելով անապատ ամայի երկիր մը դարձեր է կըսեն. եւ սակայն Պ. Լամարքին իր *Ուղեւորութիւն յԱրեւելս* անունով գրքին մէջ այսպէս կընկարագրէ անոր տեսքն ու գեղեցկութիւնը .

« Հոողոս կղզին ծովուն երեսը փունջ մը սիրուն կանանչեղենի կընմանի. արմատենեաց, « եղջերենեաց, մոլորագնեաց, մայրեաց եւ բզենեաց անտառներուն վրայ բարձրացած կերէնան ճերմակ ճերմակ մզկիթներուն թերեւ ու « վայելուչ աշտարակները... Այս կղզին կարծես « թէ Ասիոյ ղիմացը յառաջապահ գունդի մը բանակետոյ է : Աշխարհիս երեսը ասոր պէս լա « ծովային զինուորական դիրք, ասոր պէս գե « ղեցիկ երկինք, ասոր պէս գուարձայի ու բա « ռերեր երկիր ունեցող տեղ չկայ : »

Քաղաքին մէջ ասպետաց ժամանակէն մնացած հին շէնքեր մինչեւ այս տարիս կըգտնուէին, թէպէտ եւ շատը կիսաւեր ու երեսի վրայ ձգուած. անոնց մեկն էր անա նաեւ Սուրբ Յովնանեւս եկեղեցին որ հիմն ի վեր տապալեցաւ այս օրերս : Բնակիչներն են տաճիկ, յոյն եւ հրեայ, գրեթէ ամենքն այ աղքատ, բայց գոհ եւ ուրախ մարդիկ. իրենց առուտորի գլխաւոր նիւթերն են գինի, ձէր, սպունգ, չոր պտուղ եւ շէնքի փայտ :

### Թ Ի Ի Բ Ն Ա Կ Ձ Ա Յ Գ Ա Ղ Ղ Ի Ո Յ

Գաղղիոյ բնակիչներուն թիւը 1856 տարւոյս վերջերը ելեր է՝ ըստ պաշտօնական ազգանամարին՝ երեսուն եւ վեց միլիոն երեսուն եւ ինը հազար երեք հարիւր վարսուն եւ չորս հոգի :

## Հ Ա Յ Կ Ա Չ Ե Ա Ն Թ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

Ս Պ Ե Ր Ե Ն Բ Ա Գ Ր Ա Տ Ո Ի Ն Ի Ք,

(Շարայ արուրիւն եւ վերջ 1:)

Ի բարգմանչաց անտի մերոց Ենովք եւ Ղեւոնդ Ի Սպեր եղան ուսուցիչ, յայտ է քե բարերարութեամբ Բագրատունեաց :

Ի կառավարութիւն եւ ի պահպանութիւն երկրին ինքեանք Բագրատունիք կարգեալ էին, եւ յաւետայնմ ուշադիրք էին. ուստի եւ ի պատերազմունս Վարդանանց ոչ զօրու ծանու մխեցան. քանզի Տիրոց անուն ոմն յիշատակի անդ, այլ գործք նորս ոչ ըստ արժանեաց երեւելի տոհմիդ պատմարանին : Բայց գուցէ ոչ դովին այդու շատացան, այլ առաքինացան յայլ վեհագոյն առաքինութիւնս : Իբրեւ զի գունդագունդ ամենայն տամբք եւ ընտանեօք եւ որդւովք բողեալ զվերին Հայաստան, եկեալ խոնկեցան զկողմամբք Խաղտեաց, ուր ի մեշ ամրական վայրաց գորդիս եւ զընտանիս պատասպարեցին, եւ արի քաջագունքն զեն ի ձեռին զտաջս առնուին զՊարսից, երբ յայս կոյս զային արշաւել ի վերայ փախստեիցն :

« Բանգի բագումք — որպէս գրէ սուրբն՝ Եղիշէ — յագգէ եւ ի մեծ նախարարացն էին, եւ եղբարք եւ որդիք եւ դստերք՝ հանդերձ ամենայն սիրելեօք իւրեանց ի մեշ ամրական վայրացն, ոմանք յանկոյս երկիրն Խաղտեաց . . . :  
« Դարձեալ եւ որք էին ի լերինս Խաղտեաց,  
« իբրեւ տեսին քե յանդգնաբար զօրքն Պարսից  
« յաներկիւզս իջանէին յամուրս աշխարհին,  
« յարձակեցան եւ նոքա մեծաւ զօրութեամբ ի  
« ձորագաւառն Տայոց : Եւ գտին անդ գունդ  
« բագում (ի Պարսից) ի զօրացն արքունի, որ  
« գերի առնուլ կամէին զամրականս աշխարհին.  
« յարձակեցան, հարան ի դիմի միմեանց, եւ  
« կամակարութեամբ յաղբեալ, եկեալ արկին  
« զգօրութիւն զնդին Պարսից . . . Աստ կատարեցաւ  
« ցաւ եւ երանելին Հմայեակ՝ եղբայր սպարապետին  
« Հայոց Վարդանայ : »

Ապաքեն փախուցելոցն ի Պարսից բաժնէ՝ յերկիրս յայտոսիկ որ էին ի բաժնի Յունաց՝ ոչ այլ ինչ երեւի լեալ դիտումն, այլ զընտանիս եւ զորդիս ամրացուցանել յանքոյք տեղիս Խաղտեաց եւ Տայոց եւ Եգերաց, եւ ինքեանց զեն ի ձեռին երբալ ի պաշտպանութիւն հաւատակից եղբարց իւրեանց : Իսկ Բագրատունիք ի սպառ վերջացան զտան յասպնջակաւութենէ փախուցելոցն, կամ ի նիգակակցութենէ պատերազմին զոր փախուցեալքն մղեցին ընդդէմ Պարսից յարձակողաց : Ինձ բուի քե քաջ քաջ զամենայն զսարսու իւրեանց արարին, քե ի հիւրընկալել զեկեալ հասեալսն ի վերին Հայաստանէ, եւ քե ի հանգուցանել զնոսա յերկիր դրացեաց իւրեանց. եւ քե ի Պարսից կուսէ ի վերայ յարձակումն ինչ պատանեաց, պաշտպանեցին զնոսա բագմօք Բագրատունի ազգդ, եւ ոչ վերջացան ի պարտեաց հաւատակցութեան եւ ազգակցութեան իւրեանց ընդ նախարարագունս ամենայն՝ ընդ որս խնամութեամբ էին հաղորդեալք, որպէս եւ վայել էր երեւելի տոհմիդ :

Բայց բուի եւ ես՝ քե ի պարտեացն իւրեանց վերջացեալ զտան յոչ կամաց : Եւ քե զխնորհ, յուր :

Վասակ Սիւնի նենգուպատիր հեարիւք երկփե կեացզգունդն Հայոց, եւ ցրուեաց զնոսա, մինչեւ ի բաժնի Յունաց անցին զնացին ոչ սակաւք, որպէս տեսաք ի վերոյ. բայց ուրացողն եւ չարն այն ոչ եւ այնու շատացաւ : Զի իբրեւ տեսանէր քե Հայք օր ըստ օրէ անցեալ գեան ի կողմն Յունաց, որով գուցէ ի սպառ անմարդանայ պարսկակողմանն Հայաստան, եւ ինքն տկարանայ, եւ յունակողմն զօրանայ, յայլ իմն խոնկես ձեռն արկ :

Բանգի ի նմին ժամանակի զինուորեալ էր յարբունիս Յունաց այլ ոմն Վասակ երկրորդ՝ առաջնոյն խոնկեակից վատախորհուրդ, որոյ զրգոնեալ ի զրուածոց առաջնոյն Վասակայ, զհանդէս եւ-

հատակութեան երանեայ Որերոյն իբրև գյանցանս ապստամբութեան ցուցանէր առաջի արքունեացն Յունաց. որով ոչ միայն Յոյնք ձեռնարաւ եղին ի դատեն Հայոց, այլ եւ արգելս եղին զՀայս փախուցեալս յիւրեանց կողմն ասպնջականութեան ջառնել արժանի. եւ ոչ իսկ զի գորդիս եւ զընտանիս ամբարցուցեալ յիւրեանց միջի՝ ինքեանք զնասցեն ի պաշտպանութիւն հայրենեաց. որպէս եւ ոչ Հայք բնակեալք ի յունակողմն՝ զեն ի ձեռին անցցեն ի վերինն Հայաստան յօգն զինուորեալ ուխտին :

Այսպէս յակամայ կամս ճնշեցան Հայք որ գտան ի կողմն Յունաց. նա զի եւ նախանձարեկ ջարուրիւն բուսոյ բարուց նոցին ոչ կարէր տեսանել զՀայս պերճացեալս յիւրեանց բաժնին :

Եւ այս ոչ միայն ի մահուանն Արշակայ, յորժամ ջնտուն գոք ի բազաւոր Հայոց, այլ զյոյն կոմս մի, եւ միայն զսպարապետութեան զպատինն ետուն Գագաւոնի (որ գուցէ ի Բագրատունեացք) :

Յամին իբր 478, ըստ գրելոյ Պրովոպիոսի յոյն պատմչի, զոր եւ ի մեջ բերէ Հ. Միքայէլ Չամբեան (ի Հա. Բ., յեր. 155), յորժամ շփոքք յուզեին ի կայսերական տանն ընդ Ձենոն եւ ընդ Բասիլիսկոս, նախարարք Հայոց որք էին ի բաժնի Յունաց՝ ապստամբեցան յիշխանութենէ կայսեր :

Բայց միւս անգամ բազաւորեալ Ձենոնի, նուաճեաց զնոսա եւ մերկեաց ի նախարարական պատուոյն՝ որով պերճանային : Միւսմն միայն ետ գայն պատիւ իբրև զերագոյն եւ իշխող նոցին, եղեալ օրէնս՝ զի այնուհետեւ մի որ այլ ի նոցանէ տանուտիրական իշխանութեամբ վարեացի՝ բաց ի միջինն զոր կայսրն կարգեցէ ի վերայ նոցա ըստ ժամանակին : Այլ որպէս նա ինքն յաւելու գրել, նոքա ինքնին եւ ազատօրէն իշխեին զաւառաց իւրեանց, եւ առաջնորդէին ցեղից իւրեանց, եւ ի պատերազմունս իսկ ոչ խառնէին ի զօրս Յունաց : Չի ոգին ազատութեան դեռ արժարժ էր ի սիրտս նոցա, եւ ոչ ի սպառ շիջեալ իշխանասիրութեանն իղձ :

Երբ յայլ նախարարագուն տոնմս այսպէս, որոց ոչ սակաւք յետոյ եկեալ հասեալ էին ի յունակողմն, եւ նորոգ երկրի եւ նորանոր ժողովքրդոց տէր կացեալ, քանի նս առաւել Բագրատունիք, որոց իբրև յոր հարիւր ամաց հետէ սեպհականեալ զգաւառն Սպեր, եւ բազմացեալ էր ի նմին տոնմականօք եւ սերնդովք, վարել վարեցին զպայազատութիւն նորին ամենայն ազատութեամբ :

Մինչեւ յամին իսկ 645, առ Ներսիսի Գ, յիշատակէ Սերէոս պատմիչ. « Եւ նստաւ արքայ « Կոստանդին ի Կարնոյ քաղաքի... ընդ առաջ « ելին նմա Սպերացիքն՝ իշխանք Բագրատունեաց : »

Չի գայնու ժամանակաւ, եւ յետոյ եւս այլոց ամենայն տոնմից նախարարութիւնք երբաւովերբային եւ նուաստանային. իսկ Բագրատունիք հայրենատուր սեպհականութեամբ տեսրք էին երկրի եւ կայուածոց. ինքեանք բազմասերունդ լեալ, յաճախեցուցեալ զնպատակս, եւ հարստագոյն ստացուածովք. ուստի եւ բաւեցին յետ ժամանակաց որպէս փիւնիկ անմեռ ի մոխրոց ծնանել նոր ի նորոյ եւ կենդանանալ, եւ յաւերժացուցանել զտոնմին իւրեանց շքեղութիւն :

Որպէս յամին 780 ի Սպեր փայլեցան որդիք Սմբատայ Բագրատունոյ՝ Աշոտ Մսակեր կոչեցեալն, եւ եղբայր նորա Շապուհ. զրնիկ երկիր իւրեանց բաժանեցին, որպէս զրեն Ասողիկ եւ Վարդան, եւ զգուշանային զաւառի իւրեանց, ոչ տալով բոյլ թշնամեաց միշամուխ անդր լինել :

Բայց եւ տեսեալ թէ ի վերին Հայս ի տագնապի կայ ազգն, զերկիրն ընդ պահպանութեամբ իւրեանցայնոց բողեալ՝ ինքեանք եղբարքն երկոքեան զնացին յԱշոցք եւ ի Տաշիրս յամին 782, եւ շահատակեալ անդ՝ ազատեցին զերկիրսն ի Հազարացոց անտի : Անցին ապա ի Շիրակ եւ յԱրշարունիս, վարեցին անտի եւս զՋանապ իշխանն որ բունակալեալ ուներ զերկիրսն գայնսփիկ՝ սեպհականս Կամսարական ցեղին :

Աշոտ Մսակեր բազում զանձուք զնոց զնեաց զերկիրն Շիրակայ, ուր եւ Անին է՝ յայնժամ փոքր ինչ աւան, եւ յետոյ շինեալ մեծացոյց :

Թեպէտ ի Ջանապայ կորգեաց Աշոտ զերկիրքս, բայց քանզի սեպհական էր այն ցեղին մնացելոյ ի Կամսարականաց անտի, ոչ շատ համարեցաւ իրաւամբք ի թշնամեացն հանելոյ եւ եր սեպհականել ինքեան, այլ եւ իրաւամբք ստացմանն :

Յայնմ հետէ տուն Մսակերին Աշոտոյ եղեւ Շիրակ, իսկ եղբոր նորին Շապուհոյ՝ որպէս եւ բաժանեալ առեալ էր յեղբօրէ իւրմէ՝ Սպեր : Միայն թէ այս Շապուհ ի մրցմունս անդ պատերազմաց զօրս ի վեր անդր մրցեցան՝ սպանաւ, եւ փոխանորդեաց ընդ նմա ի Սպեր Աշոտ որդի նորին :

Յամին 819, Թեովիլյոս կայսր եկեալ՝ զբազում երկիրս Հայաստանեայց աւերեաց, եւ բաց յայլ-

ազգեաց՝ զՀայս եւս կոտորեաց. եւ իբրեւ դարձաւ ի Խաղտիս, խաղացոյց զՀայս անգամ ի Յունաստան : Իսկ իբրեւ գնաց ի Սպեր՝ ընդ առաջ եկն նմա այս Աշոտ շապունեան, եւ սիրելի եւ հաճոյ գտեալ նմին՝ կարգեցաւ Հիւպատոս եւ Պատրիկ մեծ, ընկալեալ զիշխանութիւն եւ ի վերայ մերձաւոր գաւառացն :

Այսր Շապունեան Աշոտոյ է որդի Շապուն Բագրատունի Պատմագիր, որոյ գործն այժմ չիք ի միջի. միայն Յովհաննէս կարուղիկոս գհանգամանս այնր Պատմութեան այսպէս ստորագրէ. « Հաճեցաւ բանս ոչ երկրորդել միւսանգամ գհե-  
« տեանս գրուցաց Շապինոյ Բագրատունոյ, եւ  
« մերումս ժամանակի Պատմագրի, որ յայտա-  
« պատում իսկ արարեալ է գրուցս պայազատու-  
« բեան որդոյ Աշոտոյ սպարապետին Սմբատայ  
« զիշխանական պատմութիւնն, եւ զբազաւո-  
« րացն գհանգամանացն զկարգս, եւ կամ զդարձ  
« զերելոցն ի Բուխայե՝ զՀայաստանեայցս իշ-  
« խանաց եւ նախարարաց յիւրաքանչիւրն սեպ-  
« հական իշխանութիւնս ածեալ կացեալ հաս-  
« տատեալ : եւ քէ ոչք ի նոցանէ հոյակապք եւ  
» հարուստք, եւ ուժեղահք ընդդէմ հակառակոր-  
« դաց հինից գտան, եւ կամ ոչք յումեքէ եղևն  
« հարստահարեալք, եւ կամ զվախճան նոցա  
« իւրաքանչիւրումն տեղ. զի... ըստ իւրումն  
« ժամանակի ընտանի գոյով նորա գրուցացն  
« ամենայնի, զեղջուկ բանիւ բաւական քեզ տայ  
« պատճառս տեղեկութեան : »

Այս Շապուն պատմագիր էր յերեւելի տանէ Բագրատունեաց, զի Աշոտ Մսակեր էր եղբայր հաւու նորա, եւ Շապուն հաւ իւր էր որ սպանաւ ի մրցմունս պատերազմաց, եւ հայր իւր Աշոտ պայազատ Սպերոյ. երէ գայոց տոհմից զանցս անցս գրեաց, ապա յաւետ զիւրոյ տոհմի, որոց քաջ եւս ծանօթագոյն գտաներ :

Որպէս եւ Յովհաննէս կարուղիկոս յաւելու գրել. « Ի մանկութենէ մինչեւ ցերեւոյքս երիտասար-

« դութեան զԱշոտոյ որդոյ Սմբատայ սպարա-  
« պետի զգորութիւնս եւ զքաջութիւնս եւ զպա-  
« տերագմունս, եւ զհրոսմունս յայս, եւ գայոց  
« եւս ի նա, բաւական բերցի քեզ առ ի Շապինոյ  
« պատմեալքն : »

Արդ երէ ականաւոր պատմիչն Յովհաննէս կարուղիկոս այդպէս չէր ըմպանկեալ զգործ Շապինոյ Բագրատունոյ իբրեւ զեղջկարանի, գուցէ զրիչք ավտորժէին գհաւասարն նորա առնույ հետ-գհետէ, եւ գայր ժամաներ առ մեզ պատմութիւնն այն, եւ այսպէս գոնէ յաւետագունից ծանօթաբանութեանց մեծի տոհմին տեղեկագոյն գտանեաք. ուր առ ի չգոյն այնր Պատմութեան՝ տարակուսիմք զանցս անցս Բագրատունեաց դասակարգել, եւ չգրեմք քէ յետ զօրանայոյ նոցա ի Շիրակ՝ դեռ ոմանք ի Սպեր կացին մնացին պայազատել զերկիրն, երէ ամենեքին միահամուռ դիմեցին ի Շիրակ ի հզօրել զնորն զայն բազաւորութիւն տոհմի իւրեանց :

Եւ յետ ընդ երկար բազաւորելոյ Բագրատունեաց, եւ զկնի աղետից եւ վշտաց զի եղև Բագրատունի տանն, չբաւեմք որիշ ինչ ասել : Գիտեմք քէ բազումք ի Վիրս անցին, այլ ի Շիրակայ եւ ի բազաւորական տանէն քէ ի Սպերոյ՝ որոշել ինչ չկարեմք : Եւ քէ մնացին ոմանք այլ եւս անդ, ի յարձակման Սկիւրացոց զի եղև Սպեր. յայժմեան զեղջուկ բնակիչս Սպերոյ՝ գտանին ոմանք ի նախնի սերնդոց Բագրատունեաց, եւ կամ դեռ Հնչք կացին մնացին երէ տաճկադենք ապստամբք եւ աւագակք են, երէ զեղջուկք ոմանք աննշանք. զայսմ ամենայնէ չունիմք ինչ մի հաւաստեալ ասել : Միայն յայս կնքեմք զխօսս մեր, քէ Բագրատունիք զամս հազար, գուցէ աւելի եւս, տանուտիրական իշխանութեամբ եւ կողմնակալութեամբ պայազատեցին զերկիրն Սպերոյ :

Ի Գում-գափու. Կոստանդնուպօլսոյ,

Ի Պատրիարքարանին Հայոց, ի յուլիսի 1836:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲՍԶԱՆ ԿԱԹՈՒԴՈՍՈՍ :

Պ. Ապիշինի գիտուն գաղղիացին Փարիզու ամսագրաց մեկուն մեջ<sup>1</sup> համառօտ տեղեկութիւն մը հրատարակեց այս օրերս մեր սրբազան Կարուղիկոսին վրայ հանդերձ կենդանագրովը՝ որ հոս կրդենք : Թեպէտ եւ այն յօդուածին խօսքերն ընդհանրապէս ի գովեստ են ըստ արժանոյն ազգասէր Հայրապետին, սակայն մեզի պատշաճ չերեւցաւ ամբողջ բարգմանել զայն, ստոյգ գիտնալով քէ խիստ շատ կարելոր գիտելիքներ կան որ Պ. Ապիշինին չէր կրնար ունենալ կամ ստուգել : Մենք արդէն խնդրած ենք Թիֆլիզու մեր ազգասէր եւ հմուտ բարեկամաց մեկէն որ սրբազան Կարուղիկոսին աշխարհաքարոզ արդիւնքներուն ու վարուց վրայ ստոյգ տեղեկութիւնները մանրամասն գրուածքով մը մեզի հաղորդէ. յուսանք քէ քիչ առնեն կրնդունինք ու կրնրատարակենք քէ ամսագրոյս մեջ եւ քէ առանձին :

Հոս այսչափ միայն յիշատակենք որ Պ. Ապիշինին ընդունած տեղեկութեանցն այ նայելով, սրբազան Հայրապետին ծննդեան քուսկանն է 1770, որով հիմա 87 տարեկան կրչայ. իսկ երոպական լրագրաց մեջ ըսուածք քէ 10 $\frac{1}{2}$  տարեկան է՝ անհիմն կերեւեալ նաեւ մեզի :

Թիֆլիզէն դեռ նոր եկող պատուաւոր ճանապարհորդները կրվկայեն քէ ալեգարդ Հայրապետը քաջառողջ ու զօրեղ է, ամենայն զգայարանքը իրենց ուժին մեջ, մտաւոր արբնութեանը հեռ նաեւ ազգասէր գործունեութիւնը անպակաս. եւ քէ այս տարի Ռուսաց Կայսեր օժման հանդիսին ներկայ չգտնուելուն պատճառ՝ ոչ քէ ծերութիւնն էր, այլ առժամանակեայ տկարութիւնը՝ որով չկրցաւ ճանապարհորդութիւնն առաջ տանիլ :

Պ. Ապիշինիին գրած տեղեկութեանը մեջ գրերէ գլխաւոր բան մը չկայ որ արդէն ծանօթ ըլլայ մերազնեայց այս իրենց ճշմարտապէս ազգասէր եւ մեծապէս պատկառելի ու սիրելի Հայրապետին վրայ. այսինքն Թիֆլիզու մեջ *Ներսիսեան Վարժարանին* հիմնարկութիւնը, նոյն քաղաքին մեջ շատ մը շինուածոց եւ արուեստից ու ձեռագործաց իր ջանիւքը ծաղկելը, Ռուսաց եւ Պարսից պատե-

րագմին առնեն արիասիրտ հովուապետին ցուցուցած արդիւնքը, յետոյ Նախիչեանի ու Պետարապիոյ առաջնորդութիւն ընելը տասնըհինգ տարի, անկէց ետքն ալ 1845ին կարուղիկոսական արժող նստիլը միաձայն ընտրութեամբ եւ հաւանութեամբ ազգայնոց : Մենք մերուզած եւ սպասած տեղեկութեամբ յոյս ունինք շատ հետաքրքրական գիտելիքներ հաղորդելու ազգայնոց այս մեր սրբազան Հօր վրայ. իսկ առ այժմ գոն ըլլանք մեր ազգասէր եւ բազմահմուտ բարեկամ Ստեփանոս Նազարեանց վարժապետին խօսքերը հոս բարգմանել, որ Հայկական Մատենագրութեան վրայ հանած ուստերէն գրքին 114-118 էջերուն մեջ այսպէս կրսէ.

« Երէ մարդկային ազգիս տարեգրութեանցը  
« մեջ եղած են այնպիսի մարդիկ որ իրենց ազգը  
« յուսաւորելու զեղեցիկ նպատակով վառուած՝  
« բովանդակ իրենց երկրաւոր գանձերը իրենց  
« հայրենեաց օգտին գոներ են, — երէ Պատմու-  
« քիւնը իր յիշատակարանացը մեջ այնպիսի  
« մարդկանց օրինակներ կրնծայէ որ չափաւոր  
« միջոցներով մեծամեծ բարիք ըրած են իրենց  
« ազգին, — այնպիսի անձանց մեկն է Ներսէս, որ  
« առաջ Նախիչեանի եւ Պետարապիոյ վիճա-  
« կաւոր արքեպիսկոպոս էր, եւ հիմա կարուղի-  
« կոս է եւ Պատրիարք ամենայն Հայոց : Ծնած  
« է Ներսէս 1770ին Աշտարակ ըսուած աւանը որ  
« առնելով Հայաստանի վառաւոր տեղերէն մեկն  
« էր Արարատեան նահանգին Բագրեւանդ գաւա-  
« ռին մեջ՝ Եփրատայ ալանցը մօտ, եւ իջած է  
« Շահազիզեանց վաղէմի տոնմէն որ Հայաստանի  
« շատ պատուաւոր ցեղերէն մեկն է : Մինչեւ  
« տասնութը տարուան հասակը հօրը տունը  
« կենալէն ետեւ՝ իւր կնքահայրը, որ էր Գալուստ  
« գերապատիւ արքեպիսկոպոս Էջմիածնի, քովն  
« առաւ զինքը դաստիարակելու : Վրան կարգէ  
« դուրս յաշողակութիւններ տեսնելով, ժամա-  
« նակաւ ունենալու աստիճանին ալ նախատես  
« ըլլալով, յանձնեց զինքը Գրիգոր արքեպիսկո-  
« պոսին խնամոցը, որ Կոստանդնուպօլսոյ պա-  
« տրիարք եղած էր եւ մեծ համբաւ ունէր գիտու-  
« րեան եւ առաքինութեանը կողմանէ : Այս կեր-  
« պով կրրուեցաւ պատանին, եւ քսան տարե-

<sup>1</sup> *Magasin Pittoresque*, tome XXIV, décembre 1856.

« կան հասակին մէջ եկեղեցական վիճակն ըն-  
 « տրելով՝ աստիճան առաւ ու միանգամայն  
 « աւագ սարկաւագ ընտրուեցաւ կարուղիկէին  
 « էջմիածնի : Գալուստ վարդապետին մեռնելէն  
 « ետեւ, — զոր իրեն երկրորդ հայր կանուանե-  
 « ներսես, — նոր պաշտպան եղաւ անոր նոր-  
 « ընտիր Ղուկաս կարուղիկոսը, եւ յետոյ Գանիէլ  
 « կարուղիկոսը, որ երիտասարդին պայծառա-

« փայլ ձիրքերը տեսնելով՝ վարդապետական  
 « աստիճան տուաւ անոր, ետքն ալ եպիսկոպոս  
 « ձեռնադրեց : Մինչեւ այն ժամանակը Ներսեսի  
 « գործունեութիւնը էջմիածնի խաղաղաւետ պա-  
 « տերուն մէջ ամփոփուած էր. քիչ ատենէն  
 « ընդարձակ ասպարեզ բացուեցաւ առջեւը :  
 « Կարուղիկոսը 1802ին յուղարկեց զինքը ի Վրաս-  
 « տան. հոն Պարսից ու Ռուսաց մէջ բոբրոքած



Տէր Ներսես սրբազան Կարուղիկոս ամենայն Հայոց

« պատերազմին բոլոր ժամանակը, ճշմարտապէս  
 « դիւցազնական քաջութեամբ ու նահատակու-  
 « քեամբ իր ազգին բարւոյն համար աշխատե-  
 « ցաւ : Պատերազմէն ետքը էջմիածին դարձաւ,  
 « ու եռանդուն գործակից մը եղաւ Կարուղիկո-  
 « սին՝ արողոյն գործողութիւնները առաջ տանե-  
 « լու : Կարուղիկոսը անոր արքեպիսկոպոսական

« աստիճան տուաւ, եւ յուղարկեց զինքը յանձ-  
 « նարարութեամբ Տաճկաստանի այլ եւ այլ քա-  
 « ղաքները, եւս եւ Կոստանդնուպոլիս առ մեծ  
 « վեզիրն ու ինքնակալը. անկեց դարձաւ Ներսես  
 « էջմիածնի ամենայն յաջողութեամբ, արքային  
 « կողմանէ փառաւոր հրովարտակ (ֆերման) տա-  
 « նելով Կարուղիկոսին : Երբոր Ռուսաց ու Տաճ-



« կաց մէջ պատերազմ բացուեցաւ 1809ին, եւ  
 « Ռուսաց զօրքերը Էջմիածնէն կանցնէին, Ներ-  
 « սեա որ կարողիկոսին հոն չգտնուելուն՝ կա-  
 « րողիկոսարանին գործերը վրան առած էր, —  
 « ինչպէս նաեւ պատերազմին բոլոր ժամանակը  
 « — իր վառվրձուն ազգասիրութիւնը եւ աներ-  
 « կիւղ քաջութիւնը շատ բանի մէջ յայտնի ըրաւ :  
 « Եփրեմ Կարողիկոսն որ նաեւ արտոր,  
 « Ներսեսին ազգասէր գործունեութեան առջեւը  
 « հորիզոն բացուեցաւ : Նորէն Վրաստան յու-  
 « դարկուեցաւ 1814ին, բայց այնուհետեւ իբրեւ  
 « վիճակաւոր արքեպիսկոպոս հոն այլ եւ այլ  
 « ժամանակ եկած բնակած հայ ժողովրդոց : Բնա-  
 « կութիւնը Թիֆլիզ քաղաքին մէջ հաստատած  
 « ըլլալով, բոլոր ուժովն ու ջանքովը աշխատե-  
 « ցաւ իրեն յանձնուած հօտին հոգեւորական  
 « կրթութեանը . իր ազգին հիմակուան պիտոյքը  
 « եւ յարգը լաւ հասկըցեր էր . հասկըցեր էր նաեւ  
 « երուսական յուսաւորութեան օգուտները ուրիշ  
 « ամենայն հայ եկեղեցականներէն աւելի . ուստի  
 « եւ ձեռք զարկաւ հայրենասիրական տաժանելի  
 « մեծ գործողութեան . Թիֆլիզու մէջ 1819ին  
 « վարժարան մը հաստատեց շատ ստըկով, եւ  
 « քովը տներ որոշեց վարժապետներուն բնա-  
 « կութեանը համար : Այսու դիտմամբ Փարիզէն  
 « հրաւիրեց շատ ծախքով Շահան Զրպետեան  
 « անունով հայերենագետը, Մոսքուայէն ալ Ալամ-  
 « դարեան Յարութիւն վարդապետը՝ որ Լազա-  
 « րեանց ձեմարանին մէջ դասատու էր, եւ նոյն  
 « ձեմարանին մէջ ուսում սովորած քանի մը երի-  
 « տասարդներ : Ուսումնարանին մէջ դաս  
 « տրուած նիւթերը՝ այն ժամանակի միջոցնե-  
 « րուն համեմատ՝ էին հայերէն, ռուսերէն, գաղ-  
 « ղիարէն, պարսկերէն, ու քանի մը հասարա-  
 « կաց կրթութեանը հարկաւոր ուսմունքներ : Ու-  
 « սումնարանին աշակերտաց թիւը 1828ին 400ի  
 « կընասներ : Գեղեցիկ սկզբնաւորութենէն ցան-  
 « կալիպատուղներ կըլլուսացուէին սպազային հա-  
 « մար . բայց աստուածային Նախախնամութիւնը  
 « ուրիշ կերպ կարգաւորեր է եղեր : Պարսից դէմ  
 « պատերազմ բացուեցաւ 1827ին . Ռուսաց տե-  
 « րութիւնը զիտնալով Հայոց այս հռչակաւոր

« առաջնորդին վրայ ունեցած սերն ու վստահու-  
 « թիւնը, հրաւիրեց զինքը ի գործակցութիւն բա-  
 « նակին Ռուսաց ընդդէմ Պարսից : Ներսեսի  
 « սրտին մէջ իր ազգին հոգեւոր եւ քաղաքական  
 « երջանկութեան փափաքը՝ միմիայն սրբազան  
 « ու վեհանձնական զգացմունք դարձած էր .  
 « ուստի բողոց իր նորակառոյց եւ բերակատար  
 « ուսումնարանն ու փութացաւ զնաց Երեւան՝  
 « Ռուսաց բանակին հետ : Երբոր այն միջոցին  
 « Սարտարապատի պարիսպները Ռուսաց սպա-  
 « րապետէն կայծակնահար եղածի պէս փլան  
 « կործանեցան, եւ սրբազան Հայրապետը խօս-  
 « քով եւ կենդանի օրինակովը Հայկազանց սրտին  
 « մէջ վաղուց մոռցուած պատերազմական քա-  
 « ջութիւնն արթընցուց, բնական էր որ կարելի  
 « չէր Ներսեսին մտածել թէ իր Թիֆլիզու մէջ  
 « կանգնած ուսումնարանը ինչ վիճակի մէջ էր :  
 « Անփորձ մեծաւորներու ձեռք մնացած ըլլալով,  
 « այն ուսումնարանը շատ՝ վնասուեցաւ, եւ վեր-  
 « ջին հարուածն ընդունեցաւ երբոր Ներսես հե-  
 « ոացաւ զնաց հարաւային Ռուսաստան... Յու-  
 « սալի է որ Ներսես սրբազան Կարողիկոսը, որ  
 « ուսմանց եւ գիտութեանց հօգօր պաշտպան եղած  
 « է միշտ, Հայաստանի հոգեւորական գործողու-  
 « թիւնները կարգի դնելէն ետեւ այն գիտութեան  
 « կործանեալ տաճարը նորէն կանգնէ, անով իր  
 « կենաց սիրելի մտածութիւնը գլուխ հանէ, որ  
 « էր Հայաստանի որդիքը երուսական Արեւիքին  
 « տաճարը մոցընել : »

Հոս դրուած կենդանագրոյն համար այս միայն  
 կըրճանուցանենք թէ մեզի ծանօթ կերպարանացը  
 պայծառութեանն ու շնորհալի նայուածքին ոչ  
 սակաւ պակասութիւն բերած է պատկերին  
 փայտի վրայ փորագրուած ըլլալը :

Այլ եւս շատ տարիներով պարգեւէ Մատուած  
 Հայաստանեայց եկեղեցոյ այս քաջընթաց եւ ար-  
 բուն Հօտապետը, եւ ըստ ազգասէր եռանդեանը՝  
 որով ի մանկութենէ վառեալ ըլլալը գործով եւ  
 արդեամբք ցուցուցեր է միշտ, օր ըստ օրէ իւր  
 ազգին պայծառանալը աւանտ, ցնծայ ու փա-  
 ռաւորուի :

« այլ զայն ու զայն վնասուեցաւ զնազգասիրութեամբ »  
 « նաեւ սպասարանը մտածուած չէր, որպէսզի »  
 « անորով տեղադր ըլլին . պայծառացի չէր զայն »  
 « միջոցաւ . զնազգասիրութեամբ մտածուած չէր »  
 « աստ ձեռքէն զնազգասիրութեամբ զնազգասիրութեամբ »  
 « ձեռք ու զնազգասիրութեամբ : միջոցով զնազգասիրութեամբ »

« զնազգասիրութեամբ զնազգասիրութեամբ »  
 « զնազգասիրութեամբ զնազգասիրութեամբ »  
 « զնազգասիրութեամբ զնազգասիրութեամբ »  
 « զնազգասիրութեամբ զնազգասիրութեամբ »  
 « զնազգասիրութեամբ զնազգասիրութեամբ »  
 « զնազգասիրութեամբ զնազգասիրութեամբ »

## ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ԻՆՆԵՒՍԱՍՆԵՐՈՐԴԻ ԴՍՐՈՒՄ

(Շարայարութիւն եւ վերջ<sup>1</sup>.)

« Զարդիս Լուսաւորչականք մեծաւ մասամբ, այսինքն է մեծ կէս մասն ազգին Հայոց, զկաթուղիկոսն Էջմիածնի ճանաչեն գլուխ եկեղեցւոյն իւրեանց իբրեւ զօրինաւոր յաջորդ սրբոյն Քրիստոսի : Այժմու կաթուղիկոսն Ներսէս, որ երբեմն առաջնորդ էր ի Տփլիսիս, զիննսնամենիւք ուրեմն է<sup>2</sup>... :

« Առ կաթուղիկոսին է ժողով կամ սիւննորոս արքեպիսկոպոսաց կամ եպիսկոպոսաց ոչ վիճակաւորաց, եւ վարդապետաց, հանդերձ գործակալաւ կամ հոգաբարձուաւ, որ եւ դիւանապետ է կաթուղիկոսարանին : Կարեւորագոյնքն ի խրնդիրս առաքին ի Փեթրպուրկ, եւ ընդ ձեռն փոխարքային Կովկասեան գաւառաց արկանին ընդ վճռով ինքնակալին : Ի վախճանեղ կաթուղիկոսին հնգետասան եպիսկոպոսունք վիճակաւորք արքողոցն Պարսկաստանի, Ռուսիոյ եւ Տաճկաստանի ի ժողով զումարին. ընդ նոսին եւ ի շխանք եւ երեսփոխանք ժողովրդոց : Անձինք երկու ընտրին քուէարկութեամբ, եւ ապսպարին յընտրութիւն ինքնակալին, եւ նա որոշէ եւ հաստատէ սովորաբար զայն յորոյ կողմն իցէ քուէիցն առաւելութիւն... : »

Պարոն Տիւրիէ գնովմեականացն Հայոց խօսելով ասէ քէ քիւ նոցա հասանիցէ ց240 կամ ց250,000. որ յայտնի վրիպակ է, փոխանակ ասելոյ քերեսս քէ այս քիւ է հոովմեականաց եղելոց ի Տաճկաստան յայլ եւ այլ ազգէ. քանզի նոցին իսկ լատին միսիոնարացն հաշիւք վկայեն՝ քէ հոովմեականացն Հայոց քիւ չանցանէ քան ց38 հազար, յորոց երեքտասան հազարքն ի Կոստանդնուպօլիս են, եւ այլք յարտաքին գաւառս : Իսկ որք ի Ռուսս եւ ի Լեհաստան, ի Մաճառս եւ ի Գա-

LA SOCIÉTÉ ARMÉNIENNE AU XIX<sup>e</sup> SIÈCLE.(Suite et fin.<sup>1</sup>)

« Aujourd'hui le patriarche d'Edchmiadzine est reconnu par la majeure partie des Arméniens grégoriens, c'est-à-dire par la plus grande partie de la nation, comme leur véritable chef religieux, comme le légitime successeur de saint Grégoire. Le catholicos actuel, précédemment archevêque de Tiflis, Nersès, touche à sa quatre-vingt-dixième année<sup>2</sup>... »

« Le catholicos est assisté d'un conseil ou synode dirigeant, qui se compose d'archevêques ou évêques sans diocèse et d'archimandrites, avec un procureur qui est chargé de l'instruction et du rapport des affaires, et qui est aussi chef de la chancellerie patriarcale. Lorsque ces affaires ont de l'importance, elles sont adressées à Saint-Petersbourg et soumises à la décision de l'Empereur par l'entremise du vice-roi du Caucase. A la mort du catholicos, les quinze prélats ses suffragants, qui siègent dans la Perse, la Russie et l'empire ottoman, sont convoqués, ainsi que les principaux de la nation et les députés des corporations. Deux candidats sont choisis au scrutin et ensuite présentés à l'acceptation de l'Empereur, qui désigne et confirme ordinairement celui qui a la majorité des suffrages... »

M. Dulaurier pense qu'on peut évaluer le nombre des Arméniens catholiques de 240 à 250,000; mais il y a évidemment erreur dans ce calcul. Il faudrait, pour arriver à ce chiffre, comprendre dans cette catégorie tous les catholiques, de toute sorte de nationalité, existant en Turquie. D'après les renseignements pris par des missionnaires latins mêmes, il est certain que le nombre des Arméniens catholiques, en Turquie, ne dépasse pas 38,000, dont 13,000 à Constantinople, et le reste dans les provinces. La Russie, la Pologne, la Hongrie et les

<sup>1</sup> Տես Քիւ ժ, էջ 271 :

<sup>2</sup> Պ. Տիւրիէ կասելու աստանօր ինչ տեղեկութիւնս ինչ՝ զվարուց սրբազան կաթուղիկոսին՝ որ մեծապէս տարանջատք են ի մերոցս տեղեկութեանց. եւ քանզի ոչ ի կարի մերում է մանր ստուգել առ ժամս զամենայն եւ այնպէս ուղղազրել զիրսն՝ գէր ծանօթութիւնս ի բանս նորին յարելով, լաւ համարեցաք բնաւ իսկ զանց առնել զկեղակարծ ասացուածովքն, որպէս եւ զայլովք ինչ քաղաքական խորհրդածութեամբք զորս արարեալ է մատենագիրն իմաստուն ի վերջ կոյս յողուածոյն իւրոյ :

<sup>1</sup> Voir le numéro d'octobre, page 271.

<sup>2</sup> M. Dulaurier entre ici dans quelques détails sur la biographie du vénérable catholicos. Nos renseignements au sujet des actes de ce prélat sont bien loin de s'accorder avec ceux de notre ami; mais comme il nous est presque impossible, pour le moment, de constater ou rectifier au moyen de quelques notes tous ces détails, nous avons préféré les supprimer ici, ainsi que certaines réflexions politiques que le savant auteur avait ajoutées à la fin de son article.

նուրեան իշխանութիւնս իցեն՝ հազիւ ժամանեն ց10 կամ ց12 հազար, որով համագումար թիւ հոռովմեական Հայոց գտանի լեալ 50,000 :

Յետ այնորիկ տեղեկութիւն ինչ համառօտ դեռ գծագմանէ հոռովմեականաց ի Հայս, զվերջին բաժանմանէ նոցա եւ կազմելոյ նոր ժողովուրդ յարեւելս, եւ ապա զերկոցունց միաբանութեանցն Մխիթարեանց՝ Վենետկոյ ասեմ եւ Վեննայի, որոց վաստակքն եւ հանգամանք քանզի քաջածանօթ ինչ իրք են մերոցն եւ օտարաց՝ աւելի իմն համարիմք կրկնել աստանօր : Ի կարգ անկեալ բանին՝ խօսի ապա զգրաւորական աշխատութեանց, եւ առանձինն զօրագրաց որ հրատարակին, մանաւանդ թէ հրատարակէին (յամին 1854) յազգիս մերում, եւ զորոց բազում ինչ ճշգրտաբանեալ՝ ուրեք ուրեք խոտորի յիրացն ըստուգութենէ, եւ անմեղադիր է օտարութեամբն :

Ապա եւ զԼազարեանցն ձեմարանէ ճառէ որ ի Մոսքուա, եւ զՄուրատեան եւ զՌաֆայէլեան վարժարանաց, եւ յարէ :

« Ի գաւառս օսմանեան պետութեան եւ ի Կովկասեան նահանգին որ ընդ ձեռամբ Ռուսաց են՝ չիք եւ ոչ մի քաղաք հայաբնակ յորում չկայցեն նախնական դպրոցք, եւս եւ ուսումնարանք երկրորդ կարգի, որք առ հասարակ գտանին ի գաւիթս կամ ի շրջակայս եկեղեցեաց եւ վանորէից՝ ընդ տեսչութեամբ եկեղեցականաց, եւ մատակարարին ծախիւք ազգասեր ընկերակցութեանց : Յոմանս մանկտիւնս օրիորդք խառն գնան՝ յորժամ յոյժ դեռահասակք իցեն . յայս որիչ եւ առանձինրն տեղիք են վասն մանկտույն եւ աղջկանց : Բայց աղջկանցն երբեյոց ի դպրոց սակաւ յոյժ է բազմութիւն, եւ ուսմունք նոցին ոչ ինչ աւելի են քան զսկզբունս քրիստոնեական վարդապետութեան, քերականութեան, բուարանութեան եւ ասդեգործութեան, եւ այս հրահանգք նոցին վաղ ընդ փոյք վճարին : Այսմ ընդհատութեան պատճառք են չկամել մարցն անշատել յինքեանց ըզդատերս, եւ սովորութիւն արգելական վարելոյ կենցաղ կանանուոյն Արեւելից, որք եւ բանտեալք իմն ի կանանոցի՝ առտնին հոգոց եւ եր պարապեն :

« Գաղաքք Տաճկաստանի յորս ուսումն գիտութեանց առաւելագոյն ունի յառաջատորիւն՝ են յերոպական մասին Պուքրէշ, Աղբիանուպօլիս եւ Վանուս . իսկ յասիակողմանն Կեսարիա, Սեբաստիա, Եղոկիա, Պրուսա, Զմիւռնա, Կարին,

principautés danubiennes n'en renferment guère plus de 10 à 12,000 ; de sorte que le nombre total des Arméniens catholiques se trouve réduit à 50,000.

L'auteur donne ensuite une courte notice sur l'introduction du catholicisme en Arménie, sur la dernière séparation des catholiques arméniens par la formation d'une nouvelle communion, et sur les deux congrégations religieuses de Venise et de Vienne. Les travaux et l'état actuel de ces communautés étant assez connus, nous n'avons pas cru devoir nous y arrêter ici. Il passe ensuite en revue les productions littéraires les plus récentes, ainsi que les publications périodiques de l'Arménie (en 1854). Très-exact en général dans ces renseignements, s'il s'écarte parfois de la vérité faute d'indications plus précises, sa qualité d'étranger suffit pour l'excuser.

Après avoir parlé de l'institut de MM. de Lazareff à Moscou, et des collèges Moorat et Raphaël, M. Dulaurier ajoute :

« Les provinces de l'empire ottoman et celles du Caucase qui appartiennent à la Russie n'ont pas de ville tant soit peu considérable habitée par les Arméniens où ils n'aient fondé des écoles primaires et d'autres où l'enseignement représente ce qui est chez nous l'instruction du deuxième degré. Ces établissements sont ordinairement placés dans l'enceinte ou le voisinages des églises et des monastères, et sous la direction ou la surveillance du clergé. Ils sont entretenus aux frais des associations patriotiques. Les uns admettent des enfants des deux sexes, lorsqu'ils sont tout à fait en bas âge ; d'autres ont un local et des professeurs particuliers pour les filles et pour les garçons ; enfin il en est qui reçoivent des filles seulement. Le nombre des enfants du sexe qui fréquentent ces écoles est proportionnellement très-limité ; leur éducation se borne aux premiers principes du catéchisme, de la grammaire et du calcul et à quelques ouvrages d'aiguille ; elle finit de très-bonne heure. Cette interruption a pour cause la répugnance qu'ont les mères à se séparer de leurs filles, et le préjugé, si profondément enraciné dans les mœurs de l'Orient, qui séquestre les femmes dans l'intérieur du gynécée et les voue exclusivement aux soins domestiques.

« Les villes de la Turquie où l'instruction publique a fait le plus de progrès parmi les Arméniens sont, en Europe, Bucharest, Andrinople, Varna ; en Asie, Kaisarié, Sivas, Tokat, Brousse, Smyrne, Erzeroum, Kharbrout, Mousch, Van, Beyrouth, etc. Dans les contrées

Խարբերդ, Մուշ, Վան, Պերուք, եւ այլք: Իգաւաոսն որ ընդ ձեռամբ Ռուսաց՝ Տիխիս, Լոռի, Խուրայիս եւ այլն : Ի վանս էջմիածնի եւ ուսումնարան համբաւեալ առ Հայս, յորում եկեղեցականացն ցանկացողք աշտիճանաց մարզին յամենայն հրահանգս պիտանիս ժառանգաւորաց՝ ի նախնականաց անտի ուսմանց մինչեւ ի գիտութիւնս որ արժանի առնեն զնոսա վարդապետականինպատուոյ :

« Ի Կոստանդնուպօլիս, հանդերձ բուն քաղաքան եւ արուարձանեօք եւ կրկնակի ավամբքն Վոսփորի, գտանին 38 դպրոցք Հայոց, յորս յաճախեն մանկունք իբր 6500 կամ 7000 : »

Պարոն Տիւրքիէ յետ քանի ինչ խօսս առնելոյ զդպրոցաց Կոստանդնուպօլսոյ, որպէս եւ Նորոյն Ջուղայի եւ Կալկաթայ, վախճան առնէ իւրումն զեղեցիկ զբուսածոյ այսու բանիւք .

« Աստանօր զկայ աոցէ վաստակս իմ այս յորում գուն գործեցի տալ զնկարագիր ազգին Հայոց ըստ պեսպէս կերպարանափոխութեանցն յորս արկին զնա դեպք բազմարկարծեանք, եւ ըստ արդի հանգամանաց նորին : Ջան ի գործ արարի ճշգրտատիպս հանել ի նկար զնմանութիւն նորին՝ ի բնագրաց եւ ի վաւերական յիշատակաց զգծագրութիւնսն զլիսաւորս գաղափարելով : Է ուրեք արդեօք զի զբիջն իմ խոտորնակս ընքացաւ . սակայն որք առաջնորդեցին նմա եւ յիշատակեցան առ յինեն՝ ճշմարիտք են եւ հաւաստիք : Ի խազմիս յուզելոյ արդ ընդ Գուռն Օսմանեան եւ ընդ Ռուսս՝ այս նկարագիր նշանական եւս ընծայի եւ մտադրութեան արժանաւոր քան յայլ ժամանակս, եւ մեծագոյն մասն ազգին Հայոցբաշխեալ գտանի ի մէջ երկոցուն այնոցիկ պետութեանց, եւ երկաքանչիւրումն մասնաւորէ ոյժ եւ զօրութիւն իրական, բեպէտ եւ ոչ յոյժ զգալի :

« Օսմանեան պետութեանն կարող է նա սպաս հարկանել ճարտարութեամբն ի դրամական իրս, եւ մեծաւ գործունեութեամբն՝ որ ի վտանգի ժամանակսն կարեւորագոյն եւս է . դարձեալ եւ այնու զի առ քրիստոնեական ոգոյն քաջայարմար է ընդելանալ օրինաց եւրոպականին քաղաքակրթութեան : Երկուք ի զլիսաւորագունիցն պաշտամանց, հանդերձանք վառօդոյ ասեմ եւ դրամահատութիւն, ի նոցա ձեռս են ի Տաճկաստանի : Իսկ Ռուսաց աշխարհին արբանեկէ Հայն ձայնիւ բարբառոյ կաթողիկոսին էջմիածնի . . . . եւ հանդերձ Վրաց աշխարհաւն ընծայէ նմա զօրավարս պատերազմափորձս յԱսիա : . . . »

soumises à la domination russe, ce sont Tiflis, Lori, Koutaïs, etc. Au couvent patriarcal d'Edchmiadzin, il existe un séminaire célèbre parmi les Arméniens, et où l'aspirant aux fonctions ecclésiastiques est conduit du premier degré des études cléricales jusqu'à celui qui le rend digne du titre de *vartabed* ou docteur en théologie.

« Constantinople, en comprenant avec Stamboul ou la ville turke les faubourgs et la banlieue, sur les deux rives du Bosphore, renferme trente-huit écoles ou collèges arméniens. Le chiffre des élèves qui les fréquentent peut être porté de 6,500 à 7,000 environ. »

M. Dulaurier fait mention des écoles arméniennes de Djulfa et de Calcutta, et termine son précieux article par ces paroles :

« Je m'arrête ici dans la tâche que je m'étais proposée, de peindre la nation arménienne dans les transformations que lui ont fait subir les vicissitudes sans nombre qu'elle a éprouvées, et dans son état actuel. Je me suis efforcé de retracer au vif sa physionomie, en empruntant les principaux linéaments de mon esquisse aux monuments et aux livres originaux. Mon crayon peut s'être égaré quelquefois, mais les indications qui l'ont dirigé, et que j'ai rapportées, sont d'une vérité réelle et historique. Dans la lutte qui s'est engagée entre la Porte et la Russie, et pour laquelle s'arme l'Europe occidentale, cette physionomie devient plus que jamais intéressante pour nous à étudier. C'est entre ces deux puissances que s'est répartie la masse la plus considérable de la nation arménienne, et elle apporte à chacune d'elles un contingent de force peu apparente, mais effective.

« Dans l'empire ottoman, elle peut mettre au service du gouvernement une habileté financière et une entente des affaires qui rendent son concours indispensable, surtout dans un moment de crise, comme aussi l'aptitude que lui a inoculée l'esprit chrétien de s'assimiler tous les éléments de la civilisation européenne. Deux des services publics les plus importants, la fabrication des poudres et la direction des monnaies, y sont entre ses mains. A la Russie, elle prête l'autorité de la voix du catholicos d'Edchmiadzin... et lui fournit, avec la Géorgie, des généraux expérimentés dans les guerres d'Asie... »

Իմաստուն բարեկամն մեր յաւելու ի վերջէ եւ խորհրդածութիւնս ինչ քաղաքական զագղեցութենէ իւրոցն հայրենեաց ի վերայ հայկազեան գրոհիս, եւ այնպէս աւարտե գյօղուածն իւր, որ իրաւամբ դրուատեալ յերոպացոց եւ ի մերոցն առհասարակ՝ արդարեւ իսկ քան զամենայն գրուածս որ զմերոյ ազգիս վաղեմի եւ արդի հանգամանաց՝ ճոխ է ի համառօտութեան իւրում: Սմին իրի եւ մեք ոչինչ դանդաղեցաք դեռ զայն յորագրիս, դուն ուրեք ի բաց բողոյժ ինչ ինչ յոջ կարեւորացն մերումս նպատակի, եւ ուրախ եմք զի ոջ սակաւ ախորժ հաճութեամբ ընդունելի եղեւ վերձանողացն մերոց եւ այս մասն աշխատութեան մերոյ :

Notre savant ami ajoute ici quelques réflexions au sujet de l'influence politique du gouvernement français sur l'esprit de la nation arménienne, et par là termine cette étude qui a mérité les justes éloges de tous les lecteurs, tant européens qu'arméniens. C'est en effet un écrit rempli de détails précieux et toujours d'une riche concision; un travail bien supérieur à tout ce qui avait paru jusqu'à ce jour sur l'histoire et l'état actuel de la nation arménienne. Ce sont ces qualités, cette supériorité qui nous engagèrent à le reproduire ici presque tout entier, n'en retranchant, vers la fin, que ce qui n'avait aucun rapport direct avec le but que nous nous sommes proposé. Nous sommes heureux de voir que cette partie de notre travail ait aussi reçu de nos lecteurs un bienveillant accueil.

### Փ Ա Ր Ի Զ Ե Ա Ն Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Ի Ն Գ Ի Ր Ն Է Օ Շ Ա Ք Է Լ Ի :

Մինչդեռ Փարիզու զաշնադրութեան մեկ երկու պայմաններուն տրուած բացատրութեանց ուղիղն որոշելու համար նոր բանազնացութիւն մը կը պատրաստուի ի Փարիզ ի մեջ այլ եւ այլ տերութեանց դեսպաններուն, անդին Հերարի խնդիրը՝ ասղիս այ Զուիցերիի եւ Բրուսիոյ վեճը շատերուն սիրտը վախ մը կը ձգեն որ չըլլայ թէ նորէն պատերազմի դուռ բացուի արեւելք կամ արեւմուտք: Այն խնդիրներուն ինչ ըլլայն ու ինչպէս լուծուելիք պատմելը քաղաքական լրագիրներուն կիյնայ. մենք զոն ըլլանք համառօտ աշխարհագրական տեղեկութիւն մը ղեկելով հոս Զուիցերիի Նեոշաբէլ գաւառին վրայ. վասն զի արեւմտեան վեճը անոր համար է :

Շատին ծանօթ է որ Զուիցերի ըսուած երկրին կառավարութիւնը հանրապետական է : Բոլորը մեկէն 22 գաւառ բաժնուած ըլլալով, քեպետ եւ իւրաքանչիւր գաւառ ազատօրէն կը կառավարուի ու գրեթէ ինքնազուլս է, բայց ամենքը իրարու հետ այ միացած են զաշնակցութեամբ ու պարտաւորուած են իրենց երկրին ինքնիշխանութիւնը պաշտպանելու : Երկու տարին մէյմը մեծ ժողով կը կենն այս երեք քաղաքաց մեկուն մեջ :

Յուրիք, Պեռն, եւ Լիւցեռն, ու ժողովականաց չորսին իրեքը պէտք է միաբանին մեծամեծ խնդրոց վրայ որ որոշմունք մը կարենայ ըլլալ :

Զուիցերիի գաւառներէն Նեոշաբէլ ըսուածին վրայ Բրուսիոյ Բազաւորները իրաւունք մը ստացած կը համարուին՝ գրեթէ հարիւր յիսուն տարիէ ի վեր, եւ այս իրաւունքին վեճնայի մեջ եղած արքայաժողովն այ հաստատած է 1815ին. բայց Զուիցերացիք խիստ շատ անգամ բողոքեր են այն իրաւունքին դէմ, եւ այն բողոքնին առաջ տանելու համար է որ հիմա կը պատրաստուին նաեւ զինու զօրութեամբ Բրուսիոյ Բազաւորին պահանջմանցը դէմ կենալու :

Propriétaire-gérant : A. LACHAT.


Ի Փ Ա Ր Ի Զ, Ի Տ Պ Ա Ր Ն Ի Ն Վ Ա Ս Է Ի Ի :

PARIS. — IMPRIMERIE WÄLDER, RUE BONAPARTE, 44.

MIX PAROISSIERS		MIX PAROISSIERS	
1. 10	1. 10	1. 10	1. 10
2. 10	2. 10	2. 10	2. 10
3. 10	3. 10	3. 10	3. 10
4. 10	4. 10	4. 10	4. 10
5. 10	5. 10	5. 10	5. 10
6. 10	6. 10	6. 10	6. 10
7. 10	7. 10	7. 10	7. 10
8. 10	8. 10	8. 10	8. 10
9. 10	9. 10	9. 10	9. 10
10. 10	10. 10	10. 10	10. 10

MIX PAROISSIERS

<p>1. 10</p> <p>2. 10</p> <p>3. 10</p> <p>4. 10</p> <p>5. 10</p> <p>6. 10</p> <p>7. 10</p> <p>8. 10</p> <p>9. 10</p> <p>10. 10</p>	<p>1. 10</p> <p>2. 10</p> <p>3. 10</p> <p>4. 10</p> <p>5. 10</p> <p>6. 10</p> <p>7. 10</p> <p>8. 10</p> <p>9. 10</p> <p>10. 10</p>
--	--



**ԳԻՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ .**

Ի Փարիզ, տարեկան . . . . .	Ֆրանք	20	»
Արտաքոյ . . . . .		24	»
Գին միոյ տետրակի . . . . .		1	25

**PRIX D'ABONNEMENT :**

Paris, par an . . . . .	Fr. 30	»
Étranger. . . . .		24
Prix d'un numéro . . . . .		1 25



**ԳՈՐԾԱԿԱԼՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ**

ՓԱՐԻԶ, Պ. Ա. Թոմազյէ, Ի փողոցն Անսիեն-Քոմէսի, 18.

- ՊՕԼԻՍ, Կարապետ աղայ Իւրիճեան .
- ԶՄԻՆՈՆԻՍ, Ղուկաս աղայ Պաղազարեան .
- ԱՂԵՔՍԱՆԳՐԻՍ, Ղազարոս աղայ Տէր-Փասպարեան .
- ԵԱՇ ՄՈՒՏԱԻՈՅ, Յակոբ աղայ Պըյըզլեան :

**ON SOUSCRIT**

- A PARIS, chez M. Tramblay, rue de l'Ancienne-Comédie, 18.
- CONSTANTINOPE, G. Utudjian.
- SMYRNE, L. Balthazar.
- ALEXANDRIE, L. D. Gasparian.
- JASSY, J. Bouïoukly.

